Յ. ՅՈՒՋԲԱՇՅԱՆ, Ա. ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ,
Վ. ԱՎԵՏԻՍՅԱՆ, Ա. ԱՎԱՆԵՍՈՎ

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

5

*Դասագիրք հանրակրթական հիմնական դպրոցի
5–րդ դասարանի համար*

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2023

ՀՏԴ 000
ԳՄԴ 000
Ց 000

Մասնագիտական խմբագիր՝
Արթուր Ավանեսով
*(«Երաժշտությունը լրատվամիջոցներում»,
«Երաժշտությունը համացանցում»
թեմաների հեղինակ)*

Դասագրքին կից տեսաձայնային նյութերը կարող եք գտնել շապիկին պատկերված QR կոդի միջոցով կամ հետևյալ հղումով.
www.zangak.am/9789939990255
Դասագրքի էջերում տեղադրված QR կոդերը համապատասխան նյութերի անմիջական հղումներն են:

Ե 000 Երաժշտություն 5: Դասագիրք հանրակրթական հիմնական դպրոցի 5–րդ դասարանի համար/Ց. Ցուզբաշյան, Ա. Փահլևանյան.— Եր.: «Զանգակ» հրատ., 2023.— 104 էջ:

ՀՏԴ 000
ԳՄԴ 000

ISBN 978–9939–99–025–5

© Ցուզբաշյան Ց., 2023
© Փահլևանյան Ա., 2023
© Ավետիսյան Վ., 2023
© «Զանգակ–97» ՍՊԸ, 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

***ԹԵՄԱ 1**. Երաժշտության և արվեստի մյուս տեսակների փոխառնչությունները, գեղարվեստական կերպար* 7

***ԵՆԹԱԹԵՄԱ 1**. Երաժշտությունը և գրականությունը* 8

Ռոմանս, կանտատ 16

Օպերա 24

Օպերետ 38

***ԵՆԹԱԹԵՄԱ 2**. Երաժշտությունը և պարարվեստը* 40

Ժողովրդական պար 46

Դասական պար 52

Ժամանակակից պար 59

***ԵՆԹԱԹԵՄԱ 3**. Երաժշտությունը և կերպարվեստը* 60

Նկարի կերպարները երաժշտության մեջ 66

Կարո՞ղ եք երաժշտությունը «տեսնել». երաժշտությամբ «նկարված» պատկերներ 74

Կարո՞ղ եք արդյոք «լսել» նկարը 80

***ԹԵՄԱ 2**. Կինոյի և թատրոնի երաժշտություն, երաժշտությունը լրատվամիջոցներում, երաժշտությունը և համակարգիչը* 82

Երաժշտությունը թատրոնում 82

Երաժշտությունը կինոյում 86

Երաժշտությունը լրատվամիջոցներում 94

Երաժշտությունը համացանցում 98

Բառարան 100

Անվանացանկ 102

Առարկայացանկ 102

Սիրելի՛

5–րդ դասարանցի

Երաժշտության այս դասընթացը քո առջև կբացի արվեստի համերաշխ ընտանիքի դռները, կծանոթացնի արվեստի մի շարք տեսակների՝ երաժշտության, գրականության, պարարվեստի, կերպարվեստի, թատրոնի և կինոյի առանձնահատկություններին, ինչպես նաև ցույց կտա երաժշտության դերը լրատվամիջոցներում և համացանցում: Դրանցից յուրաքանչյուրին դու արդեն առնչվել ես ուսանելու տարիներին, սովորել ես երգել, պարել, նկարել, ընթերցել ես հրաշալի գրքեր, դիտել հետաքրքիր ֆիլմեր ու ներկայացումներ:

Կսովորես ճիշտ երգել ու հասկանալ երաժշտությունը, կբացահայտես արվեստի տեսակների կապը, կզարգացնես աշխարհը ճանաչելու, լավը, ճշմարիտն ու բարին ընկալելու և գնահատելու, գեղեցիկի օրենքներով ապրելու կարողությունները:

Կհամոզվես, որ արվեստի տեսակները շատ ընդհանրություններ ունեն: Դրանցից մեկի իմացությունը քեզ կօգնի ավելի խորությամբ ընկալելու մյուսները:

Բարի երթ արվեստի ուսումնասիրման ճանապարհին:

ԵԶՐՈՒՅԹ

ԿԱՏԱՐՈՒՄ

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

ՃԱՆԱՉԻ՛Ր ԵՎ ՀԻՇԻ՛Ր

ՈՒՆԿՆԴՐՈՒՄ

ՍՏԵՂԾՈՒՄ

ԻՍԿ ԴՈՒ ԳԻՏԵ՞Ս

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

ԹԵՄԱ 1

ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ՄՅՈՒՍ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԿԵՐՊԱՐ

Արվեստը մարդկային գործունեության հատուկ ձև է:

Արվեստի տեսակների փոխառնչությունների շնորհիվ մենք երաժշտության մեջ «տեսնում» ենք գունային կերպարներ, նկարի մեջ «լսում» ենք հնչյունային պատկերներ, պոեզիայում «զգում» ենք երաժշտական հնչերանգներ:

Արվեստի յուրաքանչյուր տեսակ ունի իր «լեզուն»:

Արվեստի տեսակները մեկը մյուսին լրացնում ու հարստացնում են:

Արվեստների ընկալման հարցում մեծ դեր ունեն լսողությունը և տեսողությունը: Տեսողական տպավորությունները հիմնականում կապված են տարածության հետ, լսողականը՝ ժամանակի: Լսողական–ժամանակային արվեստ է երաժշտությունը, որի ստեղծագործություններն ընկալվում են որոշակի ժամանակում լսողության միջոցով: Երաժշտությունը արվեստների մեջ ամենակատարյալն է:

Կերպարվեստը տեսողական–տարածական արվեստ է: Կերպարվեստի տեսակները ընկալվում են միանգամից տեսողության միջոցով:

Արվեստի մյուս տեսակները՝ պարարվեստը, թատրոնը և կինոն, միաժամանակ պատկանում են թե՛ լսողական–ժամանակային, թե՛ տեսողական–տարածական արվեստների թվին:

ԵՆԹԱԹԵՄԱ 1

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԷՋՐՈՒՅԹ

Լարային քառյակ
Խմբերգ
Մեներգ

Երաժշտությունն ու գրականությունը դեռևս հնագույն ժամանակներից հաճախ համատեղ են հանդես եկել: Երաժշտությունը ներգործում է մարդու վրա ու բազմապիսի զգացողություններ առաջացնում, իսկ գրականությունը կյանքն արտացոլում է հասկանալի լեզվով՝ իր կերպարների պատկերավոր ներկայացման միջոցով:

Երաժշտությունն ու գրականությունն ունեն ընդհանրություններ: Երկուսն էլ արտահայտում են բազմապիսի զգացմունքներ, մտքեր ու գաղափարներ, նկարագրում մարդկային փոխհարաբերություններն ու բնության երևույթները: Երաժշտության ու գրականության միասնությունից են ծնվել երգը, ռոմանսը, օպերան, կանտատը և այլն:

Բանաստեղծը միայն մարմին է տալիս իր մտքերին ու զգացմունքներին և իր ոգևորությունով կենդանության շունչ է տալիս բանաստեղծությանը, որ նա ապրի մշտապես, բայց որ նա թռչի, դրա համար թևեր են հարկավոր, իսկ թևեր առնել նա կարող է միմիայն էն կախարդական աշխարհքում, որ կոչվում է երաժշտություն:

Հովհաննես Թումանյան

Երգը երաժշտության ամենամատչելի ու տարածված տեսակներից է: Այն մեղեդու միջոցով արտահայտում է գրական տեքստը:

Խոսքը և երաժշտությունը միասին արտացոլում են կյանքը: Երգը մարդու մեջ առաջացնում է հույզեր, ապրումներ, ակտիվացնում է մարդու միտքը, երևակայությունը, ստեղծում երաժշտական, գեղարվեստական կերպարներ: Օրինակ՝ եթե «Կաքավի երգ»–ում Հովհաննես Թումանյանը ստեղծել է կաքավի երևակայական կերպարը խոսքի միջոցով, ապա Կոմիտասը ստեղծել է կաքավի երաժշտական կերպարը հնչյունների, ռիթմի և այլ արտահայտչական միջոցների օգտագործմամբ:

Երգի կատարման համար անհրաժեշտ է մարդու ձայն: Սակայն երբեմն կոմպոզիտորներն այնպիսի երգեցիկ ստեղծագործություններ են գրում նվագարանների համար, որ նույնիսկ առանց խոսքի ներկայության դրանք «երգ» են անվանում: Գերմանացի կոմպոզիտոր Ֆելիքս Մենդելսոնը դաշնամուրային մանրանվագների մի ամբողջ շարք է գրել և անվանել «Երգեր առանց խոսքի»: Յուրաքանչյուր մանրանվագը պարունակում է մի գեղեցիկ մեղեդի, երաժշտական կերպար: Այսպես, օրինակ, «Վենետիկի գոնդոլավարի երգը» պատկերում է մի երիտասարդի, որը գոնդոլով ուղևորներ է տեղափոխում Վենետիկի «ջրանցք–փողոցներով» ու երգում:

ՈՒՆԿՆԴՐՈՒՄ

ՎԵՆԵՏԻԿԻ ԳՈՆԴՈԼԱՎԱՐԸ

Երաժշտ.՝ Ֆելիքս Մելդելսոնի

1. *Պատմի՛ր քո տպավորությունների մասին:*

ԿԱՔԱՎԻ ԵՐԳԸ

Երաժշտ.՝ Կոմիտասի

ԿԱՔԱՎԻ ԵՐԳԸ

Խոսք՝ Հ. Թումանյանի
Երաժշտ.՝ Կոմիտասի

Արև բացվեց թուխ ամպերեն,
Կաքավ թռավ կանաչ սարեն,
Կանաչ սարեն՝ սարի ծերեն,
Բարև բերավ ծաղիկներեն:

Սիրունի՛կ, սիրունի՛կ, *2 անգամ*
Սիրունիկ, նախշո՛ւն կաքավիկ:

Քո բույն՝ հյուսած ծաղիկներով՝
Շուշան, նարգիզ, նունուֆարով,
Քո տեղ՝ լցված ցող ու շաղով,
Քնես–կելնես երգ ու տաղով:

Սիրունի՛կ, սիրունի՛կ, *2 անգամ*
Սիրունիկ, նախշո՛ւն կաքավիկ:

Քո թև՝ փափուկ ու խատուտիկ,
Պստիկ կտուց, կարմիր տոտիկ,
Կարմիր–կարմիր տոտիկներով
Կշորորաս ճուտիկներով:

Սիրունի՛կ, սիրունի՛կ, *2 անգամ*
Սիրունիկ, նախշո՛ւն կաքավիկ:

ԿԱՔԱՎԻ ԵՐԳԸ



ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *«Կաքավի երգը» կարող եք կատարել թե՛ որպես մենավոր, թե՛ որպես խմբերգ: Այսպես, դասարանի աշակերտներից մեկը երգում է քառատողերը, իսկ դասարանցիները երգում են կրկներգը՝ երկտողը: Երգե՛ք՝ մեկդ մյուսին լսելով, արտահայտիչ, գեղեցիկ ձայնով, կարծես արտահայտում եք կաքավիկի տրամադրությունը, նրա շարժումները:*

2. *«Կաքավի երգը» նախ ամբողջությամբ երգե՛ք դասընկերներով, այնուհետև ունկնդրե՛ք Կոմիտասի*

անվան լարային քառյակի կատարմամբ: Ձեր կատարումը համեմատե՛ք քառյակի կատարման հնչողության հետ և ասե՛ք ձեր կարծիքը:

3. *«Կաքավի երգը» փորձի՛ր երգել նախ նոտաներով, ապա՝ բառերով:*

4. *Ստեղծի՛ր ռիթմական նվագակցություն և նվագակցի՛ր «Կաքավի երգ»–ին:*

ԻՍԿ ԴՈՒ ԳԻՏԵ՞Ս

ԼԱՐԱՅԻՆ ՔԱՌՅԱԿ

Կոմիտասի անվան լարային քառյակը հիմնադրվել է 1925 թ. Մոսկվայի կոնսերվատորիայի մի խումբ հայ ուսանողների կողմից՝ Ավետ Գաբրիելյան (1–ին ջութակ), Լևոն Օհանջանյան (2–րդ ջութակ), Միքայել Տերյան (ալտ), Սարգիս Ասլամազյան (թավջութակ): Լարային քառյակները միշտ ունեն երկու ջութակ, մեկ ալտ և մեկ թավջութակ: Ալտ ձայնատեսակի նմանությամբ, որը երգչախմբում բարձրությամբ երկրորդն է սոպրանոյից հետո, ալտ նվագարանը նման է ջութակին, սակայն ջութակից մեծ է, իսկ նրա հնչողությունն ավելի ցածր է: Թավջութակն էլ ավելի մեծ է, ուստի այն ոչ թե պահում են ձեռքում, այլ հենում են գետնին: Նրա հնչողությունն ամենացածրն է՝ թավը:

1. *Ի՞նչ նվագարաններից է բաղկացած լարային քառյակը: Պատմի՛ր Կոմիտասի անվան լարային քառյակի մասին:*

Երկձայն երգեցողության ժամանակ ձայները անհրաժեշտ է սովորել առանձին–առանձին, ապա երգել միաժամանակ: Երգելիս պետք է լսել միմյանց, երկու ձայները ճիշտ երգել, որպեսզի երկձայն երգեցողությունը լինի բարեհունչ և գեղեցիկ:

1. *Դասընկերներով սովորե՛ք «Ա՛խ, ի՛նչ լավ են» երգը, երգե՛ք երկձայն: Փորձե՛ք երգել նախ նոտաներով, ապա՝ բառերով:*

Ա՛Խ, Ի՛ՆՉ ԼԱՎ ԵՆ...

Երաժշտ.՝ Հովհաննես Թումանյանի

Ա՛Խ, Ի՛ՆՉ ԼԱՎ ԵՆ...

Խոսք և երաժշտ.՝ Հ. Թումանյանի



Ա՛խ, ի՞նչ լավ են սարի վրա
Անցնում օրերն անո՛ւշ, անո՛ւշ,
Անրջայի՞ն, թեթևասա՛հ *2 անգամ*
Ամպ ու հովերն անո՛ւշ, անո՛ւշ:

Ահա բացվեց թարմ առավոտ,
Վարդ է թափում սարին, քարին,
Շաղ են շողում ծաղիկ ու խոտ, *2 անգամ*
Շնչում բուրմունք եղեմային:

Ա՛խ, ի՞նչ հեշտ են սարի վրա
Սահում ժամերն անո՛ւշ, անո՛ւշ,
Շվին փչեց հովիվն ահա — *2 անգամ*
Աղջիկն ու սերն անո՛ւշ, անո՛ւշ:

Երգի երկրորդ տակտում 2/4 տևողության նոտայի աջ կողմից դրված է կետ, որը այդ նոտայի տևողությունը երկարացնում է նոտայի կեսի չափով և 2/4–ը դառնում է 3/4 տևողության (2/4 + 1/4 = 3/4) նոտա: 3/4 տևողության նոտան երգելիս պետք է այն երկարաձգել և հաշվել՝ 1, 2, 3:

Ա՛Խ, Ի՛ՆՉ ԼԱՎ ԵՆ...



ՈՒՆԿՆԴՐՈՒՄ

ՀՈՎՎԻ ԿԱՆՉԸ

Հայկական ժողովրդական մեղեդի
շվիի կատարմամբ

1. *Ի՞նչ պատմվածք, հեքիաթ կամ բանաստեղծություն ես հիշում «Հովվի կանչը» մեղեդին լսելիս:*

2. *Փորձի՛ր հորինել բանաստեղծություն և դրան համապատասխան մեղեդի:*

ՍՏԵՂԾՈՒՄ

Բանաստեղծության մեջ երաժշտություն լսելու համար պետք է ուշադիր կարդալ բանաստեղծությունը, թափանցել բովանդակության մեջ, զգալ ռիթմը և ելևէջները: Հնարավոր է, որ այդպիսի ընթերցանության ժամանակ քո մեջ հնչի համապատասխան մեղեդի:

Այսպես, օրինակ, միջնադարի հայ մեծ լուսավորիչ, բանաստեղծ Ներսես Շնորհալու այս հանելուկի համար ստեղծի՛ր մեղեդի–երգ:

Ներսես Շնորհալի

1. *Նախ կռահի՛ր հանելուկը, ապա ուշադիր կարդա՛ քառատողը: Որոշի՛ր հանելուկի ռիթմը:*

Գլխարկը կապույտ,
Շապիկը կանաչ,
Մի սիրուն ծաղիկ
Ամենքին ճանաչ: *(կաշունամ)*

2. *Քո ստեղծած երգը գրի՛ր նոտաներով:*

ԷՋՐՈՒՅԹ

Ռոմանս

Կանտատ

Երաժշտության և գրականության միասնության արդյունք է նաև ռոմանսը:

Ռոմանսը երգի տեսակ է, սակայն բոլոր երգերը չէ, որ կարելի է ռոմանս անվանել:

Ռոմանսը պարտադիր ունենում է նվագակցություն, իսկ երգը կամ խմբերգը կարող են կատարվել նաև ***ա կապելլա*** (a cappella), այսինքն՝ առանց նվագակցության: Ռոմանսը կատարման իմաստով ավելի բարդ է, քան երգը: Երգերը ունենում են քառյակային կազմություն, ավելի պարզ են, հեշտ են հիշվում և կատարվում, իսկ ռոմանսը ավելի բարդ է և ծավալուն: Ռոմանսը ծագել է միջնադարյան Իսպանիայում և այդպես է կոչվել, որովհետև երգել են իսպաներեն (ռոմանեռեն), ոչ թե լատիներեն, որով երգվում էին հոգևոր երգերը: Հայաստանում ռոմանսներ են գրել շատ կոմպոզիտորներ: Առաջիններից էր Ռոմանոս Մելիքյանը:

Կանտատ ժանրի անվանումը բխում է իտալերեն բառից, որը նշանակում է «երգել»: Կանտատները նույնպես գրվում են գրական տեքստի հիման վրա: Կանտատը բազմամաս խմբերգային ստեղծագործություն է:

ՎԱՐԴԸ

Երաժշտ.՝ Ռոմանոս Մելիքյանի

1. *Երգելիս երևակայությանդ մեջ պատկերացրո՛ւ գեղարվեստական պատկերը:*

ՎԱՐԴԸ

Խոսք՝ Յո. Գյոթեի
Երաժշտ.՝ Ռ. Մելիքյանի

Փոքրիկ տղան մի վարդ տեսավ,
Տեսավ մի վարդ դաշտի միջին,
Վարդը տեսավ, ուրախացավ,
Մոտիկ վազեց սիրուն վարդին,
Սիրուն վարդին, կարմիր վարդին, *2 անգամ*
Կարմիր վարդը դաշտի միջին:

Տղան ասավ. «Քեզ կպոկեմ,
Ա՛յ կարմիր վարդ դաշտի միջին»:
Վարդն ասավ. «Տե՛ս, կծակեմ,
Որ չմոռնաս փշոտ վարդին,
Փշոտ վարդին, կարմիր վարդին, *2 անգամ*
Կարմիր վարդը դաշտի միջին»:

Ու անհամբեր տղան պոկեց,
Պոկեց վարդը դաշտի միջին,
Փուշը նրա ձեռքը ծակեց,
Բայց էլ չօգնեց քնքուշ վարդին,
Քնքուշ վարդին, կարմիր վարդին, *2 անգամ*
Կարմիր վարդը դաշտի միջին:

ՎԱՐԴԸ



2. *Ի՞նչ զգացիր ռոմանսը երգելիս: Քո կարծիքով երաժշտությունը համահո՞ւնչ էր բանաստեղծության իմաստին:*

ՈՒՆԿՆԴՐՈՒՄ ԵՎ ԿԱՏԱՐՈՒՄ

Աշխատիր քո երգեցողությամբ արտահայտել երգ–ռոմանսի տրամադրությունը: Բովանդակությանը և մեղեդու բնույթին համապատասխան կատարիր ռիթմական և պարային շարժումներ:

ԱՌՈՒՆ ԵՎ ԱՂԲՅՈՒՐԸ

Երաժշտ.՝ Ռոմանոս Մելիքյանի

ԱՌՈՒՆ ԵՎ ԱՂԲՅՈՒՐԸ

Երաժշտ.՝ Ռ. Մելիքյանի

Առու — Հե՛յ, աղբյուրի զուլա՛լ ջրեր,
Ես էլ լինեմ ձեզ հետ ընկեր:
Տեսե՛ք՝ ձեզ հետ Ծաղկաձորում *2 անգամ*
Ինչպես եմ ես ուրախ պարում:
Աղբյուր — Ջուրի՛կ, ջուրի՛կ, անո՛ւշ քույրիկ,
Ընկերդ եմ ես, սիրում եմ քեզ,
Իրար գրկած՝ սարի լանջով *2 անգամ*
Իջնենք գնանք Ծաղկունաց ծով:

Կոմպոզիտորները ռոմանսներ են գրել նաև առանձին նվագարանների կամ նվագախմբերի համար: Չնայած այդ ստեղծագործություններն առանց խոսքի են, այնուամենայնիվ, բնույթով երգային են և կոչվում են ռոմանս:

ԱՌՈՒՆ ԵՎ ԱՂԲՅՈՒՐԸ



ՃԱՆԱՉԻ՛Ր ԵՎ ՀԻՇԻ՛Ր



ՌՈՄԱՆՈՍ ՄԵԼԻՔՅԱՆ

(1883–1935)



Ռոմանոս Մելիքյանը ծնվել է 1883 թ. Հյուսիսային Կովկասի Ղզլար քաղաքում: 1902 թ. ընդունվել է Ռոստովի երաժշտական ուսումնարան: Ուսումը շարունակել է Մոսկվայի կոնսերվատորիայում, ապա տեղափոխվել է Թիֆլիս: 1921 թ. Ռ. Մելիքյանին հրավիրում են հայրենիք, որ մասնակցի երաժշտակրթական գործը կազմակերպելու աշխատանքներին: Երևանում նա ստեղծում է առաջին երաժշտական ստուդիան: Իսկ 1923 թ. իրականանում է Կոմիտասի վաղեմի երազանքը՝ այս ստուդիան հիմք է

դառնում կոնսերվատորիայի ստեղծման համար: Այժմ այն կրում է Կոմիտասի անունը:

Ռ. Մելիքյանը գրել է «Աշնան տողեր», «Զմրուխտի» ռոմանսների և «Զառ–վառ» երգերի շարքերը: Դրանց մեղեդիներն ունեն յուրահատուկ ազգային հնչերանգ, ռիթմ, հարուստ, արտահայտիչ նվագակցություն: Նաև գրել է մանկական, պատանեկան և զինվորական երգեր:

ՈՒՆԿՆԴՐՈՒՄ

ՌՈՄԱՆՍ

Երաժշտ.՝ Գեորգի Սվիրիդովի

Նվագարանային կատարման մեջ մարդկային ձայնի ջերմությանը փոխարինում են նվագարանի գեղեցիկ տեմբրը և արտահայտիչ կատարումը:

ԿԱՏԱՐՈՒՄ

ՕՐՈՐՈՑԱՅԻՆ

Երաժշտ.՝ Ա. Հարությունյանի

«Օրորոցային»–ը կանտատի չորրորդ մասն է: Այն ծավալուն երգ–ռոմանս է՝ քնարական երաժշտությամբ: Արտահայտում է մոր անսահման սերն իր մանկիկի հանդեպ: Ստեղծագործությունը գրված է կանացի թավ ձայնի՝ ***մեցցո սոպրանոյի*** կամ ***ալտի*** համար:

ՕՐՈՐՈՑԱՅԻՆ

Խոսք՝ Սարմենի, Ա. Գրաշու
Երաժշտ.՝ Ա. Հարությունյանի



Ննջի՛ր, ննջի՛ր, իմ լո՛ւյս մանկիկ,
Օրոր եմ ասում,
Դու նոր բացված սարի՛ ծաղիկ,
Հոգյա՛կ սիրասուն:
Ննջի՛ր անհոգ, իմ լո՛ւյս մանկիկ,
Գիշեր է դրսում,
Աստղերն ինձ հետ քեզ, անուշի՛կ,
Օրոր են ասում:

«Օրորոցային» երգը բաղկացած է 2 մասից: Առաջին մասը դանդաղ է, իսկ երկրորդ մասը՝ շարժուն, կայտառ:

ՕՐՈՐՈՑԱՅԻՆ



ՍՏԵՂԾՈՒՄ

1. *Ի՞նչ օրորոցային երգեր գիտես: Դրանցից մեկի հնչյուն-ների ներքո փոքրիկ բեմադրությո՛ւն ստեղծիր, ասես քնեցնում ես երեխային և երգում:*

Կարապետյան Վարդիթեր. «Օրորոցային»

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Ի՞նչ է ռոմանսը:*
2. *Ի՞նչ է կանտատը:*
3. *Ռ. Մելիքյանի ո՞ր ռոմանսներն ու երգերը գիտես:*
4. *Ունկնդրի՛ր երգչային և նվագարանային ռոմանսներ: Նկատեցի՞ր որևէ տարբերություն:*
5. *Փորձի՛ր հորինել երգ՝ նվիրված հայրենիքին:*

ՕՊԵՐԱ

ԷՋՐՈՒՅՑ

Օպերա
Ուվերտյուր
Լիբրետտո
Արիա
Արիոզո
Արիետա

Օպերա բառն իտալերեն է և նշանակում է «ստեղծագործություն», «երկ», «աշխատանք»:

Օպերան երաժշտական թատերական ներկայացում է, որտեղ գրականությունը, երաժշտությունը, պարը, թատրոնը և կերպարվեստը հանդես են գալիս միասին՝ լրացնելով միմյանց:

Օպերան բաղկացած է լինում մեկ կամ մի քանի մասից, որոնք կոչվում են ***գործողություններ***: Սկսվում է նախերգանքով, որն անվանում են նաև ֆրանսերեն ***ուվերտյուր*** բառով, այսինքն՝ սկիզբ, բացում:

Օպերան ծնունդ է առել XVI դարում Իտալիայում:

Օպերայի գրական տեքստը՝ ***լիբրետտոն***, հիմնված է որևէ գրական ստեղծագործության վրա:

Օպերայի հերոսների դերում հանդես են գալիս երգիչներ ու երգչուհիներ: Մեծ դեր ունեն նաև երգչախումբն ու նվագախումբը: Կատարումը ղեկավարում է ***դիրիժորը***: Հերոսներին բնութագրելու համար կոմպոզիտորը հորինում է երգեր, որոնք կոչվում են ***արիա, արիոզո, արիետա*** և այլն: Եթե երկու հերոս երգում են միասին կամ մեկընդմեջ, երգը կոչվում է ***դուետ*** (զուգերգ):



ՏԻԳՐԱՆ ՉՈՒԽԱՋՅԱՆ

(1837–1898)

Տիգրան Չուխաջյանը ծնվել է 1837 թ. Թուրքիայի Կոստանդնուպոլիս (այժմ՝ Ստամբուլ) քաղաքում:

1862 թ. մեկնել է Իտալիա և սովորել Միլանի կոնսերվատորիայում: Ծանոթացել է եվրոպական դասական երաժշտությանը՝ մեծ հետաքրքրություն ցուցաբերելով օպերային արվեստի, մասնավորապես՝ իտալացի հանճարեղ կոմպոզիտոր Ջուզեպպե Վերդիի օպերաների նկատմամբ:

Տ. Չուխաջյանի գրչին են պատկանում «Արշակ Երկրորդ», «Ջեմիրե», «Ինդիանա» օպերաները, «Լեբլեբիջի», «Քյոսե–Քեհյա», «Արիֆի խարդախությունը» երաժշտական կատակերգությունները, երգեր, ռոմանսներ, դաշնամուրային ստեղծագործություններ:

«Արշակ Երկրորդ»–ը հայկական առաջին օպերան է, որը Տ. Չուխաջյանը ստեղծել է 1868 թ–ին: Կոմպոզիտորի կենդանության օրոք «Արշակ Երկրորդ» օպերան ամբողջությամբ չի բեմադրվել: Առաջին բեմադրությունը կայացել է Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում 1945 թ–ին: Օպերայի սյուժեն 4–րդ դարում Հայաստանում կատարված պատմական դեպքերն են:

1. *«Արշակ Երկրորդ» օպերայից ունկնդրի՛ր Արշակի արիոզոն և խմբերգը: Պատմի՛ր քո տպավորությունները:*

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

Երաժշտ.՝ Տիգրան Չուխաջյանի

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

Խոսք՝ Միքայել Նալբանդյանի
Երաժշտ.՝ Տիգրան Չուխաջյանի

Ազատ աստվածն այն օրից,
Երբ հաճեցավ շունչ փչել,
Իմ հողանյութ շինվածքին
Կենդանություն պարգևել,
Ես՝ անբարբառ մի մանուկ, *2 անգամ*
Երկու ձեռքս պարզեցի
Եվ իմ անզոր թևերով
Ազատություն գրկեցի:

Մինչ գիշերը անհանգիստ,
Օրորոցում կապկապված՝
Լալիս էի անդադար՝
Մորս քունը խանգարած,
Խնդրում էի նորանից *2 անգամ*
Բազուկներս արձակել,
Ես այն օրից ուխտեցի
Ազատությունը սիրել:

— Ազատությ՛ուն,— գոչեցի,—
Թող որոտա իմ գլխին
Փայլակ, կայծակ, հուր, երկաթ,
Թող դավ դնե թշնամին,

Ես մինչ ի մահ, կախաղան, *2 անգամ*
Մինչև անարգ մահու սյուն
Պիտի գոռամ, պիտ կրկնեմ
Անդադար՝ ազատությո՛ւն:

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ



1. *Իսկ դու հասկացե՞լ ես Մ. Նալբանդյանի բանաստեղծության իմաստը: Երաժշտությունը արտահայտո՞ւմ է այդ իմաստը:*

ԱՐՄԵՆ ՏԻԳՐԱՆՅԱՆ

(1879–1950)



Կոմպոզիտոր Արմեն Տիգրանյանը ծնվել է Ալեքսանդրապոլում (այժմ՝ Գյումրի):

1902 թ. Ա. Տիգրանյանն ավարտել է Թիֆլիսի (այժմ՝ Թբիլիսի) երաժշտական ուսումնարանը: Ուսանել է կոմպոզիտոր Մակար Եկմալյանի մոտ: Նա երգերի, խմբերգերի, կանտատների, դաշնամուրային ստեղծագործությունների, օպերաների հեղինակ է:

Հովի. Թումանյանի «Անուշ» պոեմի հիման վրա Ա. Տիգրանյանը գրել է համանուն օպերան:

Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում «Անուշ» օպերան առաջին անգամ բեմադրվել է 1935 թ.:

Ա. Տիգրանյանը հարազատ է մնացել պոեմի բովանդակությանը, իր երաժշտությամբ արտահայտել պոեմի հույզերն ու տրամադրությունները: Նա ստեղծել է գյուղական կյանքի անմոռանալի պատկերներ՝ Համբարձման տոնի վիճակահանություն, հարսանիք և այլն:

ԿԱՏԱՐՈՒՄ

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Երաժշտ.՝ Արմեն Տիգրանյանի

2. *«Ամպի տակից», «Համբարձում յայլա» երգերը «Անուշ» օպերայից երգի՛ր արտահայտիչ ձայնով, համապատասխան տրամադրությամբ:*

ԱՄՊԻ ՏԱԿԻՑ

Երաժշտ.՝ Արմեն Տիգրանյանի

ԱՄՊԻ ՏԱԿԻՑ...

Խոսք՝ Հովհ. Թումանյանի
Երաժշտ.՝ Ա. Տիգրանյանի

Ամպի տակից ջուր է գալի,
Դոշ է տալի, փրփրում,
Էն ո՞ւմ յարն է նստած լալի
Հոնգուր–հոնգուր էն սարում:

Ա՜յ պաղ ջրեր, զուլա՛լ ջրեր,
Որ գալիս եք սարերից,
Գալիս անցնում հանդ ու չոլեր,
Ցարս էլ խմե՞ց էդ ջրից:

ԱՄՊԻ ՏԱԿԻՑ...



1. *Երգի՛ր ռիթմական նվագակցությամբ ու պարային շարժումներով:*

Տեսարան «Անուշ» օպերայից
Անուշ — Գոհար Գասպարյան

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՅԱՅԼԱ

Երաժշտ.՝ Արմեն Տիգրանյանի

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՅԱՅԼԱ

Համբարձումն եկավ, ծաղկունքը ալվան
Ջուգել են հանդեր նախշուն գորգերով,
Ջուգել են հանդեր նախշուն գորգերով:

Համբարձում յայլա, յայլա՛ ջան, յայլա՛, *2 անգամ*
Լավ օրեր յայլա, յայլա՛ ջան, յայլա՛:

Փունջ–փունջ աղջիկներ սարերը ելան՝
Վիճակ հանելու աշխույժ երգերով,
Վիճակ հանելու աշխույժ երգերով:

Համբարձում յայլա, ... *2 անգամ*

Երգ ու բույր խառնած, թև թևի տված,
Ջուգել են հանդեր, ծաղիկ են քաղում,
Ծաղկի հետ խաղում, ինչպես թիթեռներ:

Համբարձում յայլա .... *2 անգամ*

2. *«Համբարձում յայլա»–ն կարելի է կատարել և՛ իբրև պարերգ, այսինքն՝ երգով ուղեկցվող շուրջպար, և՛ իբրև թևխաղ, այսինքն՝ ձեռքերի շարժումներով մենապար: Դասընկերներով կատարե՛ք այս պարատեսակներից որևէ մեկը:*

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՅԱՅԼԱ

Արագ

Համ – բար – ձումն է – կաւ, ծաղ – կուն քրն ալ – վան,
Փունջ – փունջ աղ – ջիկ – ներ սա – ռե – ին է – լան՝

Զու – գել են հան – դեր նախ – շուն զոր – գե – ռով,
Վի – ճակ հա – նե – լու աշ – խույժ եր – գե – ռով:

Համ – բար – ձում յայ – լա, յայ – լա՛ ջան, յայ – լա՛,

Լավ օ – րեր յայ – լա, յայ – լա՛ ջան, յայ – լա՛:

ՍՏԵՂԾՈՒՄ

1. *Ընկերներով ստեղծե՛ք համապատասխան միջավայր՝ սկզբում թող աղջիկները փոքրիկ բեմադրումով երգեն «Ամպի տակից»–ը, ապա տղաները թող երգեն «Համբարձում յայլա»–ն: Բեմադրությունը պետք է ուղեկցվի պարային գեղեցիկ շարժումներով:*

Արմեն Տիգրանյան. «Անուշ»



ՎՈԼՖԳԱՆԳ ԱՄԱԴԵՈՒՍ ՄՈՑԱՐՏ

(1756–1791)

Ավստրիացի հանճարեղ կոմպոզիտոր Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտը ծնվել է 1756 թ. Զալցբուրգ քաղաքում: Վաղ մանկությունից նա ցուցաբերել է արտակարգ երաժշտական ընդունակություններ: Երեք տարեկանում արագորեն ըմբռնում էր ու վերարտադրում լսած երաժշտությունը: Նվագել է կլավեսին (դաշնամուրի նախատիպը), երգեհոն և ջութակ: Նրա առաջին ուսուցիչը եղել է հայրը:

Տասը տարեկանում Մոցարտը գրել է իր առաջին օպերան: Տասնչորս տարեկանում քննություն է հանձնել և ընդունվել երաժշտական ակադեմիա, որտեղ կարող էին անդամագրվել միայն ճանաչված կոմպոզիտորները:

Մոցարտը ստեղծագործել է երաժշտական տարբեր ժանրերում՝ մանկական երգերից մինչև մեծածավալ սիմֆոնիաներ ու օպերաներ:

Նրա մանկական երգերից են «Օրորոցի երգը», «Գարնան կարոտը» և այլն: Գրել է ստեղծագործություններ տարբեր նվագարանների համար, կոնցերտներ, սոնատներ, կվարտետներ, սիմֆոնիաներ և օպերաներ: Մոցարտի լավագույն օպերաներից են «Ֆիգարոյի ամուսնությունը», «Դոն Ժուանը», «Կախարդական սրինգը» և այլն:

Մոցարտի կյանքի վերջին շրջանի նշանավոր ստեղծագործություններից է «Ռեքվիեմը», որը համաշխարհային երաժշտական գրականության գլուխգործոցներից է:

ԻՍԿ ԴՈՒ ԳԻՏԵ՞Ս

Մոցարտի «Կախարդական սրինգ» օպերայի գլխավոր հերոսը արքայազն Տամինոն է: Նա, հաղթահարելով բազմաթիվ փորձություններ, գտնում է իր սիրուն՝ Գիշերվա թագուհու դուստր Պամինային: Վտանգներով լի ճանապարհին նրան օգնում է թագուհու նվիրած կախարդական սրինգը: Տամինոյի կողքին է նաև թռչնորս Պապագենոն, որը նույնպես գտնում է իր ընկերուհուն՝ Պապագենային: Պապագենոյի կախարդական օգնականները զանգակներն են և սրինգը, որոնք միշտ փրկում են հերոսներին:



«Կախարդական սրինգ». բեմական ձևավորում

ՈՒՆԿՆԴՐՈՒՄ

ՊԱՊԱԳԵՆՈՅԻ ԵՐԳԸ

Երաժշտ.՝ Վոլֆգանգ Մոցարտի

ԳԱՐՆԱՆ ԿԱՐՈՏ

Երաժշտ.՝ Վոլֆգանգ Մոցարտի

ԳԱՐՆԱՆ ԿԱՐՈՏ

Երաժշտ.՝ Վոլֆգանգ Մոցարտի

Արի՛, մայի՛ս, արի՛, թող պուրակը կանաչի,
Առվի խոխոջի տակ մանուշակը բողբոջի,
Ես ինչ սիրով կուզեի կապույտ մանուշակ քաղել
Եվ ինչպիսի՛ զմայլանքով մարգերի մեջ զբոսնել:

Ա՜խ, թե պուրակները նորից նոր ծաղկեն կրկին...
Ե՛կ, սիրելի՛ մայիս, կանչում ենք քեզ խնդագին:
Արևը թող ժպտա մեզ, մանուշակը ծաղկի,
Կկուն նորից կուկու կանչի, սոխակն էլ թող երգի:

ԳԱՐՆԱՆ ԿԱՐՈՏ



ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Ի՞նչ է լիբրետտոն, ո՞վ է ստեղծում այն:*
2. *Ի՞նչ դեր է կատարում սիմֆոնիկ նվագախումբն օպերայում:*
3. *Յություբ (YouTube) համացանցային հարթակի միջոցով լսի՛ր «Անուշ» օպերան ամբողջությամբ կամ դրա առանձին դրվագները:*
4. *Ի՞նչ երգեր գիտես օպերաներից: Երգի՛ր այդ երգերը:*
5. *Ի՞նչ է արտահայտում օպերայի «Նախերգանքը»:*
6. *Հայկական ի՞նչ օպերաներ ես լսել:*
7. *Ովքե՞ր են «Կախարդական սրինգ» օպերայի գլխավոր հերոսները:*
8. *Մոցարտի ո՞ր ստեղծագործություններն ես լսել:*
9. *Ի՞նչ բովանդակություն ունի «Կախարդական սրինգը»:*
10. *Պատմի՛ր Մոցարտի մասին, թվարկի՛ր նրա հայտնի օպերաները:*
11. *Լսի՛ր Մոցարտի «Օրորոցային» երգը, համեմատի՛ր «Գարնան կարոտ» երգի հետ ու մեկնաբանի՛ր:*
12. *Դասընկերներով փորձե՛ք «Գարնան կարոտ» երգը երգել երկձայն:*

ՕՊԵՐԵՏ

Երաժշտական կատակերգությունները կոչվում են ***օպերետ***:

Օպերետ նշանակում է «փոքր օպերա»՝ խոսակցական երկխոսությամբ: Օպերետի հիմքում քառյակային ձև ունեցող երգերն ու պարերն են: Օպերետի երաժշտությունն ավելի պարզ է ու մատչելի:

Տիգրան Չուխաջյանի օպերետներից «Լեբլեբիջի»–ն բեմադրվել է Հայաստանում 1945 թ. «Կարինե» անվանմամբ:

Հայ կոմպոզիտորներից օպերետներ են գրել նաև Արտեմի Այվազյանը («Ատամնաբույժն արևելյան»), Ստեփան Ջրբաշյանը («Երազիկ») և այլք:

1870–ականներին Լեյբլեբիջի օպերետը կատարող խումբը

ՈՒՆԿՆԴՐՈՒՄ

ՄԵՆՔ ՔԱՋ ՏՈՀՄԻ ՁԱՎԱԿՆԵՐՆ ԵՆՔ

Երաժշտ.՝ Տիգրան Չուխաջյանի

ՄԵՆՔ ՔԱՋ ՏՈՀՄԻ ԶԱՎԱԿՆԵՐՆ ԵՆՔ

Խոսք՝ Թ. Նալեանի
Երաժշտ.՝ Տ. Չուխաջյանի

Մենք քաջ տոհմի զավակներն ենք, չենք վախի,
Մանր–մունր փորձանքներից չենք փախչի,
Մենք դեռ փոքրուց միշտ սիրել ենք քաջություն, *2 անգամ*
Ինչ էլ որ լինի՝ չենք հանդուրժի պարտություն:

Ուրեմն առաջ զարկենք թմբուկ հաղթական,
Տանք թշնամուն մենք ծեծ ու ջարդ պատվական,
Թող իմանան՝ մենք չենք դառնա խաղալիք, *2 անգամ*
Այնպես պիտ ծեծենք, որ հիշեն հոր հարսանիք:

Տոհմը մեր եղել է քաջերից քաջը,
Անարգել է կայծակների շառաչը,
Մենք էլ նրա զավակներն ենք հարազատ, *2 անգամ*
Էլ ուրիշ ժառանգ չկա, չկա մեզնից զատ:

Ուրեմն առաջ զարկենք թմբուկ հաղթական,
Տանք թշնամուն մենք ծեծ ու ջարդ պատվական,
Թող իմանան՝ մենք չենք դառնա խաղալիք, *2 անգամ*
Այնպես պիտ ծեծենք, որ հիշեն հոր հարսանիք:



ՍՏԵՂԾՈՒՄ

1. *Ի՞նչ երգ ես հիշում, որը հայ ժողովրդի քաջության, հերոսության մասին է և քեզ տպավորել է: Երկու–երեք նախադասությամբ արտահայտի՛ր զգացողություններդ:*

ԵՆԹԱԹԵՄԱ 2

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՐԱՐՎԵՍՏԸ

ԷՋՐՈՒՅՑ

Պարարվեստ
Ռիթմ
Պար
Պարերգ

Երաժշտությունը և պարը ժողովրդի սիրելի արվեստի տեսակներից են և միշտ ուղեկցել են մարդկանց:

Կոմիտասի խոսքերով՝ երգն ու պարը կանոնավորում են մեր զգացմունքները, հոգևոր աշխարհը, օգնում մեր մեջ և շրջապատում տեսնելու և զգալու գեղեցիկը:

Երաժշտության և պարի ընդհանրությունը: Երաժշտությունը և պարը, լինելով արվեստի տարբեր տեսակներ, ունեն մի շարք ընդհանրություններ: Ամենակարևոր ընդհանրությունը ***ռիթմն*** է: Ռիթմը հունարեն բառ է, որ նշանակում է «*հավասարաչափ շարժում, ընթացք*»: Առանց ռիթմի հնարավոր չէ արվեստի այդ երկու տեսակների գոյությունը: Ռիթմն է շարժման մեջ դնում երաժշտական հնչյունները և իմաստավորում մեղեդին: Ռիթմն է, որ կարգավորում է մարդու շարժումները՝ դրանք դարձնելով ճկուն, գեղեցիկ, իմաստավորված պար: Ուստի պատահական չէ, որ երաժշտությունը և պարը համարվում են ռիթմի «զավակներ»: Ռիթմը միայն երաժշտական հասկացություն չէ: Շատ երևույթներ են կապվում ռիթմ հասկացության հետ: Օրինակ՝ մարդու սրտի զարկերը, ժամացույցի աշխատանքը, գիշերվա և ցերեկվա հերթափոխությունը և այլն:

Երգի ու պարի միջոցով մարդն արտահայտում է ամենատարբեր զգացմունքներ: Երաժշտության ռիթմի և պարի շարժումների միասնության շնորհիվ մարդն ավելի մեծ հնարավորություն է ստանում արտահայտելու խոր հույզեր, զգացմունքներ, մտքեր:

«Պսակ–պսակ»–ը կատակային բնույթի ***երգ–պար*** է: Կոմպոզիտորն օգտագործել է հայկական ժողովրդական երաժշտությանը հատուկ ռիթմեր և ելևէջներ, որոնք, միաձուլվելով խոսքերի բովանդակությանը, ստեղծել են արտահայտիչ պարերգ:

ԿԱՏԱՐՈՒՄ

ՊՍԱԿ–ՊՍԱԿ

Երաժշտ.՝ Ռոմանոս Մելիքյանի

ՊՍԱԿ–ՊՍԱԿ

Խոսք՝ Հ. Աղաբաբի
Երաժշտ.՝ Ռ. Մելիքյանի

Պսակ–պսակ, տիկնի պսակ,
Փեսան եկավ՝ լիքը քսակ:
Տիրնա՛–նինե՛,
Տիրնա՛–նինե՛,
Ջուռնի ձենը գեղով մին է:

Բոյը՝ չինար, մեջքը՝ քամար,
Աչքերը՝ ծով, ունքը՝ կամար:
Տիրնա՛–նինե՛,
Տիրնա՛–նինե՛,
Էս մեր փեսան շատ անգին է:

1. *Քո երգեցողությամբ փոխանցի՛ր երգ–պարի տրամադրությունը: Փորձի՛ր պարային շարժումներով արտահայտել երաժշտության բնույթը:*

2. *Նորի՛ց ունկնդրիր «Պսակ–պսակ» երգ–պարը: Ուշադրությո՛ւն դարձրու դաշնամուրային նվագակցությանը, թե ինչպես է նվագակցությունը հնչողությունը դարձնում ավելի գեղեցիկ ու արտահայտիչ: Երգ–պարը կատարի՛ր ռիթմական նվագակցությամբ:*

ՊՍԱԿ–ՊՍԱԿ



«Շուշիկի» պարը գրված է դաշնամուրի համար: Հեղինակը ցանկացել է դաշնամուրի հնչողությունը նմանեցնել թառ և դափ ժողովրդական նվագարանների կատարմանը:

ՈՒՆԿՆԴՐՈՒՄ

ՇՈՒՇԻԿԻ
Երաժշտ.՝ Կոմիտասի

1. *«Շուշիկի» պարը ունկնդրի՛ր նաև թառի կատարմամբ և ասա՛, թե որ տարբերակն է քեզ ավելի դուր գալիս:*
2. *Ի՞նչ նշանակություն ունեն քեզ համար երգն ու պարը:*
3. *Ի՞նչ զգացմունքներ են արտահայտում «Պսակ–պսակ» երգ–պարը և «Շուշիկի» պարը:*
4. *Հնչողության տարբերություն կա՞ արդյոք «Շուշիկի» պարի՝ դաշնամուրով և թառով կատարումների միջև:*
5. *Ստեղծի՛ր ռիթմական նվագակցություններ «Պսակ–պսակ» երգ–պարի ու «Շուշիկի» պարի համար:*
6. *Ասա՛, թե որ պարեղանակը ինչ նվագարաններով է կատարվում: Համեմատի՛ր պարերը, արտահայտի՛ր քո տպավորությունները ու մեկնաբանի՛ր:*

ՈՒՆԿՆԴՐՈՒՄ

ԵՐԱՆԳԻ
Երաժշտ.՝ Կոմիտասի

ԱՆԻՏՐԱՅԻ ՊԱՐԸ
Երաժշտ.՝ Էդվարդ Գրիգի

1. *Յուրաքանչյուր պարի տեմպին, ռիթմին և բնույթին համապատասխան կատարի՛ր պարային շարժումներ:*

ԿԱՏԱՐՈՒՄ

ՆԱՐՈՅ

Ժողովրդական պարերգ

ՆԱՐՈՅ

Ժողովրդական պարերգ

Սարեն ի վար ջուր կուգա,
Նարո՛յ, Նարո՛յ, Նարո՛յ ջան,
Քանի խմեմ՝ դուր կուգա,
Ես մարալ եմ, դու՝ ջեյրան:

Սարերի հովին մեռնեմ,
Նարո՛յ, Նարո՛յ, Նարո՛յ ջան,
Շեկ աղբոր բոյին մեռնեմ,
Ես մարալ եմ, դու՝ ջեյրան:



ՆԱՐՈՅ



1. *Երգը կատարի՛ր ռիթմական նվագակցությամբ և պարային շարժումներով:*
2. *Ի՞նչ նմանություններ ու տարբերություններ կան քո ունկնդրած պարերի և «Նարոյ» պարերգի տեմպերի և ռիթմերի միջև:*

ՍՏԵՂԾՈՒՄ

1. *Լսի՛ր որևէ ժողովրդական պարերգ: Երեք–չորս նախադասությամբ արտահայտի՛ր քո տպավորությունները:*

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Ո՞րն է երաժշտության և պարարվեստի ամենակարևոր ընդհանրությունը:*
2. *Ի՞նչ դեր է կատարում ռիթմը երաժշտության մեջ և պարարվեստում:*
3. *Երգի՛ր և պարի՛ր քո իմացած պարերգերից մեկը: Ի՞նչ ընդհանրություններ, կապեր ես տեսնում երգի և պարի շարժումների միջև:*
4. *Ստեղծի՛ր ռիթմական նվագակցություններ և նվագակցի՛ր պարերին:*

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՐ

ԷՋՐՈՒՅԹ

Ժողովրդական պար
Սինկոպա
Տանգո
Պոլկա

Հայկական ժողովրդական պարերը բազմազան են իրենց բնույթով, տրամադրությամբ, կատարման ձևով: Հնագույն ժամանակներից սկսած՝ Հայաստանում սիրված ու տարածված են կլոր շուրջպարերը, որոնք պարում են խմբով՝ կողք կողքի, կիսաշրջան կազմած: Պարին սովորաբար նվագակցում են դհոլահարը և զուռնահարը կամ տկզարը (պարկապզուկ նվագողը): Հայերը սիրում են պարել նաև երգի ուղեկցությամբ: Այդպիսի պարը կոչվում է ***պարերգ***: Երգում են հերթով, իսկ կրկներգը կատարում են միասին:

Սիրված խմբապարերից են կրակոտ ***քոչարին***, ռազմական պար ***յարխուշտան***, ***սասնա ծափպարը***, ***նազ պարը***, ***վերվերին*** և շատ այլ պարեր:

Հայերը պարում են նաև մենապարեր և զուգապարեր՝ ձեռքերի ու դաստակների գեղեցիկ, ճկուն շարժումներով: Դրանք կոչվում են նաև «ձեռնախաղեր»:

Ժողովրդական պարերն ունեն շարժումների յուրահատուկ լեզու, ճկունություն, մարմնի դիրքեր, ձեռքերի և ոտքերի, գլխի և ուսերի յուրօրինակ շարժումներ, կատարման առանձնահատուկ ձևեր:

«Պարն արտահայտում է տվյալ ազգի բնորոշ գծերը, նրա բարքն ու քաղաքակրթության աստիճանը: Թեև մարդը պարում է ազատ կամքով, բայց մարմնի տեսակ-տեսակ շարժումներն ակամա մատնում են նրա ներքինը»:

Կոմիտաս

ԿԱՏԱՐՈՒՄ

ՍԱՐԵՆ ԿՈՒԳԱՆ

Ժողովրդական պարերգ

ՍԱՐԵՆ ԿՈՒԳԱՆ

Ժողովրդական պարերգ

Սարեն կուգան պաղ-պաղ ջրեր,
Բաղ ու բաղչի ա՛լ ծաղիկ,
Կըկաթկըթի մարմար քարեն, *2 անգամ*
Բաղ ու բաղչի ա՛լ ծաղիկ:

Դու ելել ես, կայնել ես դուռ,
Բաղ ու բաղչի ա՛լ ծաղիկ,
Մեջքդ՝ բարակ, ունքդ՝ կամար, *2 անգամ*
Բաղ ու բաղչի ա՛լ ծաղիկ:

Դու ելել ես, կերթաս մարագ,
Բաղ ու բաղչի ա՛լ ծաղիկ,
Քո ուտելիք՝ մեղր ու կարագ, *2 անգամ*
Բաղ ու բաղչի ա՛լ ծաղիկ:

ՍԱՐԵՆ ԿՈՒԳԱՆ



ՈՒՆԿՆԴՐՈՒՄ

ՔՈՉԱՐԻ ՆԱՉ ՊԱՐ

Ժողովրդական պարեղանակներ

1. *Ունկնդրելուց հետո համացանցով դիտի՛ր, թե ինչպես են պարում այս պարեղանակների ներքո, ապա փորձի՛ր ինքնուրույն պարել:*

2. *Ունկնդրի՛ր ավստրիացի կոմպոզիտոր Յոհան Շտրաուսի «Գարնանային ձայներ» վալսը, «Տրիկ–տրակ» պոլկան, ապա **տանգո**, **սամբա** և **չա–չա–չա** լատինաամերիկյան պարեղանակները: Համեմատի՛ր հայկական պարեղանակների հետ:*

«Թող լարեն ջութակները» երգն աշխույժ է ու կրակոտ: Երգի մեջ հանդիպում ենք անսովոր ռիթմական պատկերների, որտեղ երաժշտության շեշտը տակտի ուժեղ մասից տեղափոխված է թույլ մասը: Երաժշտության մեջ այսպիսի շեշտադրությունը կոչվում է ***սինկոպա***:

ԹՈՂ ԼԱՐԵՆ ՋՈՒԹԱԿՆԵՐԸ

Չեխական երգ–պար

ПУСТЬ НАСТРОЯТ СКРИПКИ

Пусть настроят скрипки скрипачи,
Пусть поднимут трубы трубачи —
Нынче будет праздник здесь у нас,
Стар и мал пойдут сегодня в пляс.

Припев: Тра-ля-ля-ля!
Тра-ля-ля-ля!
Стар и мал пойдут
сегодня в пляс.



Кто не хочет с нами танцевать,
Мы того не станем долго звать,—
Сами топнут наши каблуки,
Сами спляшут наши башмаки.

Припев: Тра-ля-ля-ля!

ПУСТЬ НАСТРОЯТ СКРИПКИ





Տե՛ս նոտաներում 3–րդ և 7–րդ տակտերը: Այստեղ շեշտը առաջին ութերորդականից տեղափոխված է երկրորդ քառորդ տևողություն ունեցող հնչյունի վրա, որի վերևում դրված է շեշտ նշանը: Այսպիսի դեպքերը առաջ են բերում պարաքայլի փոփոխություն, որով ընդգծվում է լրացուցիչ շեշտը:

1. *Համեմատի՛ր «Սարեն կուգա» երգ–պարի հետ:*

2. *Ստեղծի՛ր ռիթմական նվագակցություններ և նվագակցի՛ր «Սարեն կուգա» և «Թող լարեն ջութակները» երգ–պարերին:*

ՍՏԵՂԾՈՒՄ

Պարեղանակները վկայում են նաև ազգային մշակույթի մասին: Փորձի՛ր տալ ***պոլկա***, ***տանգո***, ***սամբա***, ***քոչարի*** պարեղանակների ներքո պարողների զգեստների նկարագրությունը: Մեկնաբանի՛ր քո նկարագրությունը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Ի՞նչ ժողովրդական պարեր գիտես:*
2. *Հիշի՛ր ժողովրդական պարի կոմիտասյան բնութագրումը:*
3. *Ի՞նչ եվրոպական և լատինաամերիկյան պարեր են քեզ հայտնի:*
4. *Ո՞րն է քո ամենասիրելի պարը:*
5. *Ստեղծի՛ր քո սիրելի պարերգին համապատասխան ռիթմական նվագակցություն և նվագակցի՛ր:*

ԷՋՐՈՒՅՑ

Բալետ
Բալետմայստեր
Պա–դե–դե
Վարիացիա
Կորդեբալետ

Բալետ բառը ծագում է լատիներենից և նշանակում է «պար»: Ձևավորվել է Իտալիայում XV–XVI դարերում, ապա զարգացել է Ֆրանսիայում և տարածվել ամբողջ աշխարհում:

Բալետը թատերականացված ներկայացում է, որտեղ դերակատարները պարողներն են: Այստեղ միաժամանակ հանդես են գալիս արվեստի մի քանի ճյուղեր՝ գրականությունը, երաժշտությունը, պարարվեստը, կերպարվեստը, թատերական արվեստը, մնջախաղը:

Գրական տեքստի բովանդակության հիման վրա ստեղծվում է բալետի լիբրետտոն, կոմպոզիտորը գրում է երաժշտությունը, նկարիչը ձևավորում է բեմը, ստեղծում դեկորները, նկարում պարողների զգեստների գծագրերը և այլն:

Բալետում պարերի բեմադրությունը կատարում է ***բալետմայստերը***: Հերոսների զուգապարը կոչվում է ***պա–դե–դե***, մենապարը՝ ***վարիացիա***, իսկ խմբապարը՝ ***կորդեբալետ***:

Բալետի երաժշտական մասը ղեկավարում է ***դիրիժորը***:

Հայկական առաջին դասական բալետը գրել է կոմ-պոզիտոր Ա. Խաչատրյանը: Այն կոչվել է «Երջանկություն» և բեմադրվել է 1939 թ–ին: Հետագայում փոխվել է լիբրետտոն, բեմադրվել է նորովի՝ «Գայանե» անվանմամբ:

Այդ բալետում Ա. Խաչատրյանն օգտագործել է հայկական ժողովրդական պարային ռիթմեր: Դրա շնորհիվ այն հարազատ է դարձել հայ մարդուն և նպաստել հայկական դասական բալետային ստեղծագործությունների զարգացմանը:

ՈՒՆԿՆԴՐՈՒՄ

ԱՂՋԻԿՆԵՐԻ ՊԱՐԸ

Երաժշտ.՝ Արամ Խաչատրյանի

ԿԱՏԱՐՈՒՄ

ԱՂՋԻԿՆԵՐԻ ՊԱՐԵՐԳԸ

Ժողովրդական պարերգ

ԱՂՋԻԿՆԵՐԻ ՊԱՐԵՐԳԸ

Ժողովրդական պարերգ

Աղջիկ նազերով, նազերով,
Սիրուն մազերով, մազերով,
Աղջի՛կ, մի՛ գար մեր կալերով,
Ինձ գերեցիր հազար նազերով:
Աղջիկ նազերով, նազերով,
Տարան սազերով, սազերով,

Ծամեր հյուսած ոսկի թելերով:
Աղջիկ նազերով, նազերով,
Շեկ–շեկ մազերով, մազերով,
Սիրուն տեսքդ խելքս տարավ,
Ձենդ իմացա՝ իմ սիրտը մարավ:
Աղջիկ նազերով, նազերով,
Տարան սազերով, սազերով,
Ծամեր հյուսած ոսկի թելերով:

ԱՂՋԻԿՆԵՐԻ ՊԱՐԵՐԳԸ



1. *Դասընկերներով երգ–պարը սովորե՛ք նոտաներով, ապա երգե՛ք բառերով: Փորձե՛ք երգել նաև երկձայն՝ սովորելով յուրաքանչյուր ձայնն առանձին–առանձին, ապա միացնելով:*

ՍՊԱՐՏԱԿԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ ԵՎ ՍՏՐՈՒԿՆԵՐԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

«Սպարտակ» բալետից
Երաժշտ.՝ Արամ Խաչատրյանի



Տեսարան «Սպարտակ» բալետից

1. *Քեզ տպավորե՞ց «Սպարտակ» բալետի երաժշտությունը:*
2. *Ըստ քեզ՝ հնարավո՞ր է երաժշտությունից կռահել, թե ինչ իրադարձություններ են դրա հիմքում:*

ԻՍԿ ԴՈՒ ԳԻՏԵ՞Ս

ՍՊԱՐՏԱԿ ԲԱԼԵՏԻ ՍՅՈՒԺԵՆ

Հռոմի կայսրության զորահրամանատար Կրասոսը դաժան զավթողական հարձակումներ է գործում: Նրա գերիների մեջ են նաև Սպարտակը և նրա սիրելին՝ Ֆրիգիան: Սպարտակը, որը եղել է ազատ մարդ, շղթայված ստրուկ է դարձել: Ստրուկների շուկայում նրան բաժանում են իր սիրեցյալից: Ֆրիգիան Կրասոսի նոր ստրկուհին է դառնում:

Հարբած Կրասոսը զվարճանում է, ցանկանում, որ երկու գլադիատոր մենամարտեն՝ աչքերը փակ: Երբ հաղթողի սաղավարտը հանում են, պարզվում է, որ Սպարտակն է. նա սպանել է իր մտերիմ ընկերոջը: Սպարտակի ցասումը մեծ է. միակ փրկությունը ապստամբելն է ու ազատություն ձեռք բերելը: Նա ապստամբության կոչ է անում գլադիատորներին և դառնում է նրանց առաջնորդը: Սպարտակը ազնվորեն մենամարտում և հաղթում է Կրասոսին՝ այդպես անարգելով նրան: Կրասոսի հարճ Էգինան նրան վրեժի է դրդում և նենգորեն պառակտում է սպարտակցիներին:

Վերջին ճակատամարտում Սպարտակին հավատարիմ ընկերները զոհվում են անհավասար մարտում: Սպարտակին խաչում են նիզակների վրա: Ֆրիգան գտնում է նրան մարտադաշտում և սգում մահը:

ՈՒՆԿՆԴՐՈՒՄ

ԱՆԱԳԵ ԶԻՆՎՈՐԻ ՔԱՅԼԵՐԳԸ ՄԱՇԱՅԻ ԵՎ ՇՉԵԼԿՈՒՆՉԻԿԻ ՊԱ–ԴԵ–ԴԵՆ

«Շչելկունչիկ» բալետից
Երաժշտ.՝ Պյոտր Չայկովսկու

ԻՍԿ ԴՈՒ ԳԻՏԵ՞Ս

ՇՉԵԼԿՈՒՆՉԻԿ ԲԱԼԵՏԻ ՍՅՈՒԺԵՆ

«Շչելկունչիկ» (Մարդուկ–ջարդուկ) բալետի հեղինակը ռուս մեծ կոմպոզիտոր Պյոտր Չայկովսկին է:

Ծննդյան տոնին տանը զարդարում են տոնածառը և նվերներ պատրաստում երեխաների համար: Երեխաները բարձր տրամադրություն ունեն: Դահլիճում նոր հյուր է հայտնվում: Նա երեխաներին նվերներ է տալիս, այդ թվում՝ զվարճալի մի խաղալիք՝ զինվորի տեսքով մարդուկ–ընկույզկոտրիչ: Չարաճճի տղան կոտրում է մարդուկին: Գիշերը տղայի քույրիկը թաքուն այցելում է հիվանդ մարդուկին և տեսնում է, որ խաղալիքները կենդանացել են և պատերազմի բռնվել մկների զորքի դեմ: Շչելկունչիկը դարձել է գեղեցիկ արքայազն: Իր անագե զինվորների հետ նա հաղթում է թշնամուն:

Երբ պատերազմն ավարտվում է, աղջիկն ու արքայազնը կախարդանքով հայտնվում են ձմեռային անտառում և քայլելով հասնում են քաղցրավենիքի դղյակը: Ճանապարհին հանդիպում են կենդանացած ձյան փաթիլներին, որոնք վալս են պարում: Դղյակում նրանց դիմավորում են բարի փերի Դրաժեն ու նրա սպասավորները: Պարում են բոլորը՝ շոկոլադը (իսպանական

պար), սուրճը (արաբական պար), թեյը (չինական պար), խաղալիք փոքրիկ հովիվները, ծաղրածուները, ծաղիկները:

ՍՏԵՂԾՈՒՄ

1. *Դասընկերներով արդեն կարդացել եք «Շչելկունչիկ» բալետի սցենարը: Դիտե՛ք այն և փորձե՛ք դասարանում բեմադրել:*

ՇՉԵԼԿՈՒՆՉԻԿ
Երաժշտ.՝ Պյոտր Չայկովսկու

Լուսանկար «Շչելկունչիկ» բալետից

ԷՋՐՈՒՅԹ

Ժամանակակից պար
Ժամանակակից բալետ

Ժամանակակից պարը զարգացել է 20–րդ դարի կեսերին: Հատկապես տարածված է ԱՄՆ–ում և Եվրոպայում: Այս ժանրը ներառում է բալետը, մոդեռն և ջազային ոճերը: Դրանք կարող են ներառել նաև աֆրիկյան, արևելյան պարերի շարժումներ: Այդ շարժումները սահմանափակված չեն կոնկրետ ոճով, դրանք պետք է բացահայտեն մարդու հույզերը: Պարողները նախընտրում են իրենց հարմար հագուստներ: Հաճախ պարում են նաև ոտաբոբիկ:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՐ

ԵՆԹԱԹԵՄԱ 3

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԵՐՊԱՐՎԵՍՏԸ

ԷՋՐՈՒՅԹ

Տարածական և ժամանակային արվեստ

Երաժշտության ընկալումը տեղի է ունենում լսողությամբ, իսկ կերպարվեստի ընկալումը՝ տեսողությամբ: Հետևաբար, երաժշտությունը լսողական, ժամանակային արվեստ է, իսկ կերպարվեստը՝ տեսողական, տարածական:

Երաժշտությունը մարդկային զգացմունքները, բնության երևույթներն արտահայտում ու նկարագրում է հնչյունների և ռիթմի միջոցով, իսկ կերպարվեստը՝ գծի և գույնի միջոցով:

Եթե երաժշտության ընկալումը տեղի է ունենում որոշակի ժամանակի ընթացքում, ապա կերպարվեստի ստեղծագործությունը ամբողջությամբ տեսնելու համար հաճախ անհրաժեշտ է միայն մեկ ակնթարթ: Արտաքուստ թվում է, թե նկարում պատկերված գործողությունը անշարժ է, չի զարգանում ժամանակի և տարածության մեջ, ինչպես երաժշտությունն է, սակայն դա այդպես չէ: Կերպարվեստի ստեղծագործությունը նույնպես ունի ժամանակային զարգացում, այն կարող է պատկերել շարժում, որոշակի ժամանակում կատարվող իրադարձություններ:

Կերպարվեստի տեսակներից են քանդակագործությունը և ճարտարապետությունը, որոնք նույնպես տարածական արվեստի տեսակներ են: Դրանց յուրահատկությունն այն է, որ դրանք ծավալային են, և այդ արվեստների ստեղծագործությունները կարելի է դիտել տարբեր կողմերից:

ԿԱՏԱՐՈՒՄ

ԽՈՍՔ ԻՄ ՈՐԴՈՒՆ

Երաժշտ.՝ Ռոբերտ Պետրոսյանի

«Խոսք իմ որդուն» երգը կատարիր արտահայտիչ, բառերն արտասանիր հստակ:

ԽՈՍՔ ԻՄ ՈՐԴՈՒՆ

Քայլերգային

Լը-սի՛ր, որ - դի՛ս, պապ-զամ որ - պես Սի-րող քո մոր խոս-քը սըր - պանց, Այս - օր - վա- նից հանձ-նում եմ քեզ Հա-յոց լե - զո՛ւն հա-զա-ռա - զանձ: Կըտ-ռել է նա, հանց ասպ-ղա - լույս, Եր-կինք-նե- ը ժա-մա - նա - կի, Շա - ռա - չել է խը - ռո - վա- հույզ Սը-լաց - քի հետ հայկ-յան նե - գի:

ԽՈՍՔ ԻՄ ՈՐԴՈՒՆ

Խոսք՝ Ս. Կապուտիկյանի
Երաժշտ.՝ Ռ. Պետրոսյանի



Լսի՛ր, որդի՛ս, պատգամ որպես
Սիրող քո մոր խոսքը սրտանց,
Այսօրվանից հանձնում եմ քեզ
Հայոց լեզո՛ւն հազարագանձ:
Կտրել է նա, հանց աստղալույս,
Երկինքները ժամանակի,
Եվ շառաչել խռովահույզ
Սլացքի հետ հայկյան նետի:
Եվ Մեսրոպի սուրբ հանճարով
Դարձել է գիր ու մագաղաթ,
Դարձել է հո՛ւյս, դարձել դրո՛շ,
Պահել երթը մեր՝ անաղարտ...

Բա՛ց շուրթերդ, խոսի՛ր, անգի՛ն,
Ժիր դայլայլի՛ր, ի՛մ սիրասուն,
Թող մանկանա՛ քո շուրթերին
Մեր ալեհե՛ր հայոց լեզուն...
Պահի՛ր նրան բարձր ու վճիտ,
Արարատի սուրբ ձյունի պես,
Պահի՛ր նրան սրտիդ մոտիկ,
Քո պապերի աճյունի պես...
Ու տե՛ս, որդի՛ս, ո՛ւր էլ լինես,
Այս լուսնի տակ ո՛ւր էլ գնաս,
Թե մո՛րդ անգամ մտքից հանես,
Քո մա՛յր լեզուն չմոռանա՛ս...

Այժմ ուշադի՛ր դիտեք հայ անվանի նկարիչ Գրիգոր Խանջյանի «Հայոց այբուբեն» գոբելենը (նկարի հիման վրա ձեռքով գործած գորգը): Մեսրոպ Մաշտոցի ձեռքին

հայոց այբուբենն է, որը եղել և մնում է հայ ժողովրդի ու հայոց լեզվի պահպանման կարևոր նախապայմանը: Այս նկարը մեզ կապում է մեր նախնիների, անցյալի հետ և հպարտության զգացում արթնացնում մեր մեջ:

1. *Փորձի՛ր համեմատել Գ. Խանջյանի «Հայոց այբուբեն» գոբելենը և Ս. Կապուտիկյանի «Խոսք իմ որդուն» բանաստեղծությունը:*
2. *Բովանդակային կապ կա՞ արդյոք «Խոսք իմ որդուն» երգի և «Հայոց այբուբեն» գոբելենի միջև: Արտահայտի՛ր երկու–երեք նախադասությամբ:*
3. *Դասընկերներով «Խոսք իմ որդուն» երգը կատարե՛ք երկձայն: Երգի յուրաքանչյուր ձայն նախ սովորե՛ք առանձին, ապա ամբողջ երգը կատարե՛ք խմբով:*



Գրիգոր Խանջյան. «Հայոց այբուբեն»



ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ

(1919–2005)

Սիլվա Կապուտիկյանը հայ ամենաքնարական բանաստեղծներից մեկն է:

«Խոսք իմ որդուն» բանաստեղծությունը գրել է 1944 թ–ին: Չնայած այն հասցեագրված է որդուն, սակայն դիմում է բոլոր հայ մարդկանց: Այդ բանաստեղծության տեքստով կոմպոզիտոր Ռոբերտ Պետրոսյանը երգ է ստեղծել:

ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

(1930–2008)

Կոմպոզիտոր Ռոբերտ Պետրոսյանը ստեղծագործել է մեծ և փոքր երաժշտական ժանրերում՝ սիմֆոնիաներից մինչև մանկական երգեր: Նա եղել է Հայաստանի ռադիոյի և հեռուստատեսության «Արևիկ» մանկական վոկալ–գործիքային համույթի հիմնադիրն ու ղեկավարը: Այսօր էլ մանուկների համար գրված նրա երգերը հնչում են ամենուր:



Մինաս Ավետիսյան. «Մենք այստեղ ապրում ենք. Ձաջուռ»

ՍՏԵՂԾՈՒՄ

1. *Ուսումնասիրի՛ր Մինաս Ավետիսյանի հայրենական բնապատկերներով կտավները: Ապա փորձի՛ր քո նախընտրած նկարին համահունչ երաժշտություն գտնել:*

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Երաժշտությունն ու կերպարվեստը բնութագրի՛ր որպես արվեստի տեսակներ: Ինչո՞վ են նման և ինչո՞վ են տարբեր:*
2. *Տանը նկարի՛ր հայրենի բնապատկեր և նկարի ազդեցությամբ փորձի՛ր ստեղծել համապատասխան երգ:*
3. *Ինչպիսի՞ ռիթմական նվագակցություն կարելի է ստեղծել «Խոսք իմ որդուն» երգի համար:*

ԷՋՐՈՒՅԹ

Սիմֆոնիկ պաննո
Սիմֆոնիկ սյուիտ

ՂԱԶԱՐՈՍ ՍԱՐՅԱՆ

(1920–1998)

Հաճախ կերպարվեստի ստեղծագործությունների ազդեցությամբ ծնվում են երաժշտական նոր գործեր: Այդպիսիներից է կոմպոզիտոր Ղազարոս Սարյանի «Հայաստան» սիմֆոնիկ պաննոն: Կերպարվեստում ***պաննո*** է կոչվում փայտե տախտակի, այլ ոչ թե կտավի վրա արված նկարը: Կոմպոզիտորն այդ երաժշտությունը ստեղծել է իր հոր՝ Մարտիրոս Սարյանի նույնանուն պաննոյի ազդեցությամբ:

Առաջին մասը կոչվում է «Գառնի», որը Հայաստանի բնության հրաշալիքներից մեկի գովքն է: Գառնու կիրճում զարմանք և հիացում են առաջացնում ժայռաքարերի շերտավոր, ուղղահայաց գոյացումները, որոնք հիշեցնում են երգեհոնի փողեր: Դրանք պատկերված են Մարտիրոս Սարյանի պաննոյում: Ղազարոս Սարյանի սիմֆոնիկ պաննոն լսելիս կարելի է զգալ, թե ինչպես է Գառնու հրաշագեղ բնության գովքին կարծես միանում դարերի խորքից եկող հեթանոսական տաճարի գեղեցկության ու վեհության գովքը:

Երկրորդ՝ «Հին Երևան» մասում նկարագրվում է հին Երևանի պատկերը՝ նեղլիկ փողոցներով, արևելյան

շուկայի աղմուկով, դուդուկահարների քաղցրահունչ նվագով:

Երրորդ՝ «Արարատյան դաշտ» մասի երաժշտությունն արտացոլում է հայրենի բնության գեղեցկությունը, արևափայլ դաշտերի, քչքչան աղբյուրների, Արարատ լեռան ձյունածածկ գագաթի պատկերները:

Սյուիտի վերջին՝ «Արևոտ օր» մասում լսելի է ժողովրդական տոնախմբության տարերքը, Արարատյան դաշտում աշխատող մարդկանց խանդավառությունը:

Մարտիրոս Սարյան. «Հայաստան» պաննո

ՀԱՅԱՍՏԱՆ սիմֆոնիկ պաննո
Երաժշտ.՝ Ղազարոս Սարյանի



ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆ

(1880–1967)



Մարտիրոս Սարյանը կարծում էր, որ առանց հայրենիքի մարդ չի կարող գտնել իրեն, իր հոգին:

Ծնվել է 1880 թ. Նոր Նախիջևանում: 1904 թ. ավարտել է Մոսկվայի գեղանկարչության, քանդակագործության և ճարտարապետության ինստիտուտը: Արդեն լավ ճանաչում ունեցող նկարիչը Հովի. Թումանյանի հետ հանդիպելուց հետո իր ընտանիքով եկել է Հայաստան: 1967 թ. Երևանում բացվել է նրա տուն–թանգարանը:

Մ. Սարյանի նկարները ցուցադրված են Երևանի պետական պատկերասրահում, ինչպես նաև Մոսկվայի Տրետյակովյան պատկերասրահում: Նա ստեղծել է բնանկարներ, նատյուրմորտներ, ձևավորել գրքեր, թատերական ներկայացումներ: Հակոբ Կոջոյանի հետ ստեղծել է Խորհրդային Հայաստանի զինանշանը: Նրա լավագույն կտավներից են «Հայաստան» պաննոն, «Արարատյան հովիտ», «Սևանի ափին», «Լոռի», «Ջանգեզուր» բնապատկերները և այլն:

Մ. Սարյանը մարմնավորել է հայրենիքի գեղեցկությունը: Նրա կտավները ունեն վառ ու ներդաշնակ գույներ, որոնք ճառագում են լույս ու ջերմություն:

«Բնության ամենահրաշալի ստեղծագործությունը մարդն է:
Մարդն ինքը բնությունն է:
Միայն մարդու միջոցով է բնությունը ճանաչում իրեն:
Դա մարդու մեծագույն երջանկությունն է»:

Մարտիրոս Սարյան

ԿՌՈՒՆԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Ժողովրդական պարերգ

«Կռունկ Հայաստանի» երգը քնարական է: Այն պետք է երգել արտահայտիչ, բառերը արտասանել հստակ, շունչ վերցնել ֆրազների սկզբին:

1. *Սովորի՛ր «Կռունկ Հայաստանի» երգը, որը շատ սիրված է և մեծ տարածում ունի ժողովրդի մեջ, սակայն հեղինակի անունը չի պահպանվել:*
2. *Դասընկերներով երգը կատարե՛ք երկձայն: Երկու ձայները սովորե՛ք առանձին–առանձին, այնուհետև երգե՛ք միասին:*

ԿՌՈՒՆԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Ժողովրդական պարերգ

Դու բարո՛վ եկար, իմ կռո՛ւնկ, *2 անգամ*
Ի՞նչ լուր բերիր հայրենիքես,
Խոսի՛ր ինձ հետ ազատորեն, *2 անգամ*
Կյանքս կնվիրեմ ես քեզ:

Տեսա՞ր՝ մեր փոքրիկ բուրաստան *2 անգամ*
Վարդ, մեխակ, շուշաններ շատ կան,
Եդեմական դրախտավայր, *2 անգամ*
Դա կոչվում է մայր Հայաստան:

3. *Ի՞նչ զգացմունքներ և մտապատկերներ առաջացան քո մեջ «Կռունկ Հայաստանի» երգը կատարելուց հետո:*

ԿՌՈՒՆԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ



ՍՏԵՂԾՈՒՄ

1. *Մի քանի բառով արտահայտի՛ր, թե դու ինքդ ինչպես կդիմեիր կռունկին ու ինչ խոսքերով կհիշեիր քո հայրենիքը:*



ՆԻԿՈԼԱՅ ՌԻՄՍԿԻ–ԿՈՐՍԱԿՈՎ

(1844–1908)



Նիկոլայ Ռիմսկի–Կորսակովը ռուսական երաժշտության դասականներից է:

Ավարտել է Սանկտ Պետերբուրգի ծովային կորպուս–ուսումնարանը, ստացել սպայի կոչում և մասնակցել ծովագնացությունների: Սակայն երաժշտության հանդեպ սերը հաղթել է, և նա նվիրվել է կոմպոզիտորական արվեստին:

Ունկնդրելով արևելյան «Հազար ու մեկ գիշեր» հեքիաթաշարի հիման վրա գրված «Շահրազադե» ստեղծագործության այն հատվածը, որը փոթորկված ծով է պատկերում, կարծես մտովի տեսնում ենք փոթորկից խենթացած ծովի հսկա ալիքները, դրանց դեմ պայքարող անօգնական նավը, լսում ենք կատաղի քամու սուլոցը:

Ծովի թեման հոգեհարազատ է հայ աշխարհահռչակ նկարիչ Հովի. Այվազովսկուն: Նա պատկերել է ծովը ոչ միայն օրվա տարբեր պահերի ու տարբեր եղանակների, այլև պատկերել է ծովում կատարվող իրադարձությունները՝ նավաբեկությունները, ծովամարտերը:

ՈՒՆԿՆԴՐՈՒՄ

ՇԱՀՐԱԶԱԴԵ

Երաժշտ.՝ Ն. Ռիմսկի–Կորսակովի

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՈՎՍԿԻ

(1817–1899)



Հանճարեղ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկին ծնվել է Ղրիմի Թեոդոսիա քաղաքում: Ինքնուրույն սովորել է ջութակ նվագել: Նա թողել է 6000–ից ավելի նկարներ, որոնցից են «Իններորդ ալիք»–ը, «Փոթորիկ Նիսի ափերին» և շատ ուրիշներ: Նկարիչը շատ է սիրել Հայաստանը և նկարել է նաև Հայաստանի գեղատեսիլ բնությունը ու մարդկանց: Այվազովսկու նկարները պահվում են աշխարհի նշանավոր թանգարաններում, նաև Հայաստանի պետական պատկերասրահում: Նա, որպես բարերար, շատ է օգնել հայ ժողովրդին:

Զարմանալի չէ, որ իր հայրենի քաղաքի բնակիչները իրենց հռչակավոր հայրենակցին շատ էին սիրում, և Թեոդոսիայում կանգնեցվել է նրա հուշարձանը: Այդպիսի հուշարձան է դրված նաև Երևանում:

1. *Դիտի՛ր Հովհաննես Այվազովսկու «Իններորդ ալիքը» նկարը և ունկնդրի՛ր Ռիմսկի–Կորսակովի «Շահրազադե» սիմֆոնիկ սյուիտը ամբողջությամբ:*

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Ովքե՞ր են Մարտիրոս և Ղազարոս Սարյանները, ի՞նչ գիտես նրանց մասին:*
2. *Քանի՞ մասից է բաղկացած «Հայաստան» սիմֆոնիկ պաննոն:*
3. *Ո՞վ է Ն. Ռիմսկի–Կորսակովը, ի՞նչ ստեղծագործություններ է գրել:*
4. *Ի՞նչ գիտես Ռիմսկի–Կորսակովի «Շահրազադե» սիմֆոնիկ ստեղծագործության մասին:*
5. *Ո՞վ է Հովհաննես Այվազովսկին:*
6. *«Իններորդ ալիք» ծովանկարը դիտելիս ի՞նչ երաժշտություն ես մտաբերում:*
7. *Հնարավո՞ր է տեսնելով «լսել», լսելով՝ «տեսնել»:*

Հովհաննես Այվազովսկի. «Իններորդ ալիք»

ԿԱՐՈ՞Ղ ԵՔ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ «ՏԵՍՆԵԼ». ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՄԲ «ՆԿԱՐՎԱԾ» ՊԱՏԿԵՐՆԵՐ

ԷՋՐՈՒՅԹ

Սյուիտ

Ծրագրային երաժշտություն

Երգի խոսքերը մեր մտքում, երևակայության մեջ անմիջապես արթնացնում են որոշակի կերպարներ, պատկերներ, իսկ երաժշտությունն ավելի արտահայտիչ է դարձնում այդ պատկերներն ու կերպարները:

Ձեր մտքում կերպարներ կարող են «արթնացնել» նաև այն երաժշտական ստեղծագործությունները, որոնք չունեն խոսք, բայց ունեն խոսուն անվանում, օրինակ՝ Ա. Խաչատրյանի «Ցատկապարան»–ը, Էդ. Գրիգի «Ծիտիկ»–ը, Գեղունի Չթչյանի «Անձրև»–ը և այլն: Շատ դեպքերում ստեղծագործությունների վերնագրերը կողմնորոշում են ունկնդրին, թե ինչպիսին է ստեղծագործության բովանդակությունը: Սակայն առանց այդպիսի վերնագրերի էլ երաժշտությունն ինքը կարող է որոշակի պատկերներ ստեղծել ունկնդրի երևակայության մեջ: Ահա թե ինչ է նշանակում «տեսնել» երաժշտությունը:

ԿԱՏԱՐՈՒՄ

ՄԱՐՏԻԿԻ ԵՐԳԸ

Երաժշտ.՝ Աշոտ Սաթյանի

ՄԱՐՏԻԿԻ ԵՐԳԸ

Խոսք.՝ Գ. Սարյանի
Երաժշտ.՝ Աշոտ Սաթյանի

Թռչեի մտքով տուն,
Ուր իմ մայրն է արթուն,
Տեսնեի այն առուն
Կարոտով ես անհուն,
Որ ամեն մի գարուն
Ջրերով վարարուն
Կարկաչում էր սարերում:

Թեքվեի աղբյուրին՝
Կարոտած պաղ ջրին,
Լինեի հանդերում,
Մեր կանաչ մարգերում,
Ուր ծաղկունքն էր բուրում,
Ուր մանուկ օրերում
Հովն էր ինձ միշտ համբուրում:

Հայրենիքն իմ սրտում,
Թե չընկնեմ ես մարտում,
Ա՜խ, իմ մա՛յր թանկագին,
Տուն կգամ ես կրկին,
Կսփոփեմ քո հոգին
Համբույրով սրտագին,
Կսեղմեմ քեզ իմ կրծքին:



1. *Դասընկերներով երգը կատարե՛ք երկձայն: Նախ ձայները սովորե՛ք առանձին–առանձին, ապա երգե՛ք միասին, արտահայտիչ՝ լսելով միմյանց:*

ՄԱՐՏԻԿԻ ԵՐԳԸ

Չափավոր

Թը-ղե - ի մը-ղ - քով պուն, Ուր իմ մայրն

է ար - թուն, Տես - նե - ի այն ա - ռուն,

Կա - ր - պով ես ան - հուն, Որ ա - մեն մի գա-ղուն Ջը-ղե - ր - ով

վա-ղա - ղուն Կար-կա - չում էր սա - ղե - ղում:

Տես-նե - ի այն ա - ռուն, Կա - ր - պով ես ան - հուն,

Որ ա - մեն մի գա-ղուն Ջը-ղե - ր - ով վա-ղա - ղուն

Կար-կա - չում էր սա - ղե - ղում:

ՍՏԵՂԾՈՒՄ

1. *Փորձի՛ր նկարել «Մարտիկի երգը»: Նկարում պատ-կերի՛ր այն ամենը, ինչի մասին նա երգում է, ում կարո-տում է, հիշում:*



ԷԴՎԱՐԴ ԳՐԻԳ

(1848–1907)



Էդվարդ Գրիգը XIX դարի նորվեգացի մեծ կոմպոզիտոր է:

Գրիգը գրել է դաշնամուրային մանրանվագների շարքեր, ռոմանսներ, դաշնամուրի կոնցերտ, սիմֆոնիկ և կամերային ստեղծագործություններ: Մեծ սեր է վայելում նորվեգացի գրող Հենրիկ Իբսենի «Պեր Գյունտ» դրամայի համար նրա գրած երաժշտությունը:

Գրական տեքստի հիման վրա գրված երաժշտական ստեղծագործություններն անվանում են ծրագրային երաժշտություն: Այն մշտապես ունենում է որևէ թեմա, որևէ ծրագիր և որոշակի վերնագիր:

«Պեր Գյունտ» դրամայի երաժշտությունից Գրիգը կազմել է երկու սիմֆոնիկ սյուիտ:

Սյուիտը բազմամաս երաժշտական ստեղծագործություն է: Հնում պարեղանակները ստեղծում էին ոչ միայն պարելու համար, այլև ունկնդրելու: Հետագայում սյուիտ ժանրի մեջ մտավ նաև ոչ պարային երաժշտությունը:

Այժմ ծանոթանանք մյուս երկու մասերին: «Օզեի մահը» սգո քայլերգի բնույթ ունի, իսկ «Լեռնային արքայի քարանձավում» հատվածը սկզբից հնչում է դանդաղ, խորհրդավոր և չարագուշակ, հետո հետզհետե ուժեղանալով և արագանալով՝ վերաճում է պարային տարերքի:

ՈՒՆԿՆԴՐՈՒՄ

ԼԵՌՆԱՅԻՆ ԱՐՔԱՅԻ ՔԱՐԱՆՁԱՎՈՒՄ
ՕԶԵԻ ՄԱՀԸ

«Պեր Գյունտ» սյուիտից
Երաժշտ.՝ Էդվարդ Գրիգի

1. *Քո ունկնդրած երաժշտության մեջ ի՞նչ կերպարներ և պատկերներ ես «տեսնում»:*
2. *Դու նկատեցի՞ր, որ «Պեր Գյունտ» սիմֆոնիկ սյուիտի յուրաքանչյուր մաս ունի իր անվանումը, իսկ ամբողջ սյուիտը՝ որոշակի բովանդակություն:*

Լուսանկար «Պեր Գյունտ» դրամայի բեմականացումից

ԻՍԿ ԴՈՒ ԳԻՏԵ՞Ս

ՋՈՒԹԱԿԻ ԿՈՆՑԵՐՏ

Ա. Խաչատրյանն իր «Ջութակի կոնցերտ»–ը նվիրել է ջութակահար Դավիթ Օյստրախին: «Ջութակի կոնցերտ»–ում ժողովրդական երգեր չի օգտագործել, բայց ուշադիր լսելիս կճանաչեք առանձին հնչերանգներ, դարձվածքներ, որոնք ազգային երանգ են հաղորդում երաժշտությանը: «Ջութակի կոնցերտ»–ում իշխում է բացառիկ մեղեդայնությունը, քնարականությունը, որոնք միահյուսված են պարային տարերգին:

ՋՈՒԹԱԿԻ ԿՈՆՑԵՐՏ
Երաժշտ.՝ Արամ Խաչատրյանի

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Արվեստի ո՞ր տեսակն է քեզ ավելի սրտամոտ՝ երաժշտությո՞ւնը, թե՞ կերպարվեստը:*
2. *Ի՞նչ է նշանակում «տեսնել» երաժշտությունը: Բե՛ր օրինակներ:*
3. *Ի՞նչ գիտես Էդվարդ Գրիգի մասին:*
4. *Ո՞վ է «Պեր Գյունտ» դրամայի հեղինակը:*
5. *Սիմֆոնիկ ի՞նչ ստեղծագործություններ գիտես, որոնք գրված են գրական տեքստի հիման վրա:*
6. *Հայ կոմպոզիտորների ի՞նչ ստեղծագործություններ գիտես, որոնք գրված են կերպարվեստի ազդեցությամբ:*

ԿԱՐՈ՞Ղ ԵՔ ԱՐԴՅՈՔ «ԼՍԵԼ» ՆԿԱՐԸ

Դիտե՛ք XVII դարի իտալացի գեղանկարիչ Կարավաջոյի «Վինահարը» նկարը:

Չնայած նկարը որոշակի երաժշտություն չի հնչեցնում, սակայն պատկերված նվագարանը և ոգեշնչված նվագողը երաժշտություն հնչեցնելու պատրանք են առաջացնում, որն անվանում են նկարը «լսելու» զգացողություն:

ՈՒՆԿՆԴՐՈՒՄ

ՍԱԼՏԱՐԵԼՈ

Իտալական երաժշտություն

1. *Ունկնդրի՛ր հատված Անտոնիո Վիվալդիի «Տարվա եղանակներ»-ը շարքից: Համեմատի՛ր վինով հնչած երաժշտությունը և նկարը: Արտահայտի՛ր քո կարծիքը:*

ՃԱՆԱՉԻՐ ԵՎ ՀԻՇԻՐ



ԱՆՏՈՆԻՈ ՎԻՎԱԼԴԻ

(1678–1741)



XVIII դարի իտալացի կոմպոզիտոր Անտոնիո Վիվալդին եղել է հրաշալի ջութակահար, դիրիժոր ու մանկավարժ: Գրել է օպերաներ, կանտատներ, օրատորիաներ, սիմֆոնիաներ:

Նրա սիրելի ժանրերից մեկը կոնցերտն է: Տարբեր նվագարանների և նվագախմբերի համար գրել է շուրջ 500 կոնցերտ, այդ թվում՝ ջութակի չորս կոնցերտներից կազմված հանրահայտ «Տարվա եղանակներ»–ը շարքը:

ՍՏԵՂԾՈՒՄ

1. *Դասընկերներով համացանցում փնտրե՛ք և գտե՛ք որևէ կտավ, որում պատկերված են երաժիշտներ: Գրե՛ք նկարչի անունը: Գրե՛ք ձեր կարծիքը նկարի մասին: Արդյո՞ք կտավում «լսում եք» երաժշտությունը:*

Աշխատանքի ժամանակ ես միշտ երգում եմ՝ երբեմն հենց այնպես ինչ–որ բան, իսկ ժամանակ առ ժամանակ՝ ժողովրդական երգ կամ օպերայի արիա: Երգելն օգնում է, ստեղծում ներքին կենտրոնացում, հատուկ տրամադրություն, ռիթմ: Սա, իհարկե, շատ անհատական է, բայց այսպես է լինում համարյա միշտ: Չէ՛, հնարավոր չէ ապրել առանց երաժշտության:

Մարտիրոս Սարյան

ԹԵՄԱ 2

ԿԻՆՈՅԻ ԵՎ ԹԱՏՐՈՆԻ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ, ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐՈՒՄ, ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԻՉԸ

ԷՋՐՈՒՅԹ

Թատրոն

Պիես

Մնջախաղ

Տիկնիկային թատրոն

Երաժշտական թատրոն

Դրամատիկական թատրոն

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԹԱՏՐՈՆՈՒՄ

Թատրոն բառը հունական ծագում ունի: Թատրոնը ներառում է գրականությունը, երաժշտությունը, կերպարվեստը, դերասանական խաղը և այլն:

Այսօր Հայաստանում գործում են օպերային, դրամատիկական, տիկնիկային, մնջախաղի, պատանի հանդիսատեսի, երիտասարդական, երաժշտական կոմեդիայի և այլ թատրոններ, որոնք ներկայացումներ ունեն տարբեր տարիքի հանդիսատեսի համար: Հայկական թատրոններ են գործում նաև սփյուռքում:

Թատրոնը նույնպես ունի իր լեզուն և արտահայտչամիջոցները: Դրանք են խոսքը, դերասանական խաղը, շարժումը, մնջախաղը, դիմախաղը, դիմահարդարանքը, բեմական հագուստը, լույսը, դեկորները և այլն:

Թատրոնը համատեղ ստեղծագործական աշխատանք է, որին մասնակցում են գրողը (թատերագիրը), ռեժիսորը, դերասանը, նկարիչը, կոմպոզիտորը և այլն: Թատրոնի համար ստեղծված գրական տեքստը կոչվում է ***պիես*** կամ ***թատերախաղ***:

Թատրոնում առաջնայինը խոսքն է: Երաժշտությունն օգնում է ռեժիսորին՝ իրականացնելու իր մտահղացումները: Երաժշտությունը ներգործում է հանդիսատեսի վրա, առաջացնում հուզական վերաբերմունք բեմում կատարվող գործողությունների նկատմամբ:

ՈՒՆԿՆԴՐՈՒՄ

ՆԻՆԱՅԻ ՌՈՄԱՆՍԸ

Երաժշտ.՝ Արամ Խաչատրյանի

«Նինայի ռոմանսը» թախծոտ երաժշտություն է: Բնութագրելով գլխավոր հերոսուհուն՝ ազնիվ, բարի Նինային, ռոմանսը միևնույն ժամանակ արտահայտում է նրա անհանգստությունը, հոգեկան տագնապը:

«Վալս»–ը պարահանդեսի տեսարաններից է, արտահայտում է պարողների ուրախ իրարանցումը, զվարճանքը: Այն ավելի է ընդգծում Նինայի հոգեվիճակը: Նինան հենց պարահանդեսի սրահում կորցնում է ամուսնու նվիրած ապարանջանը, որը ողբերգության առիթ է դառնում: Եթե ուշադիր լսեք, վալսի երաժշտության մեջ կզգաք նրան համակած հուզմունքն ու տագնապը:

ԻՍԿ ԴՈՒ ԳԻՏԵ՞Ս

ԻՄ ՍԻՐՏԸ ԼԵՌՆԵՐՈՒՄ Է

1961 թ–ին Սունդուկյանի անվան թատրոնը բեմադրեց ամերիկահայ ականավոր գրող Վիլյամ Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է» պիեսը: Բեմադրության ռեժիսորը Վարդան Աճեմյանն էր, իսկ երաժշտության հեղինակը՝ կոմպոզիտոր Առնո Բաբաջանյանը:

Բաբաջանյանի գրած երաժշտությունը ոչ միայն հուզական մեծ լիցք է հաղորդում գործողությանը, այլև դառնում է ներկայացման գլխավոր «հերոսներից» մեկը: Երաժշտությունը, մանավանդ «Իմ սիրտը լեռներում է» երգ–մեղեդին, օգնում են պատմելու մի հուզիչ պատմություն, թե ինչպես է դառը ճակատագիրը բարի մարդկանց գաղթական դարձրել և նետել հեռավոր Ամերիկայի ափերը: Հայուհի ծեր Մարեի ընտանիքը և նրանց լավ բարեկամ, շոտլանդացի տարեց շեփորահար ՄաքԳրեգորը մաքառում են կյանքի դժվարությունների դեմ և տառապում իրենց հայրենիքի կարոտից: Նրանց միավորում են հոգու մաքրությունը և հայրենիքի կարոտը: Չնայած նրանք հայտնվել են օտար երկնքի տակ, սակայն իրենց սրտերը թողել են հայրենի լեռներում: Այդ մասին է շոտլանդական երգը, որը շեփորով նվագում էր ՄաքԳրեգորը:

ՈՒՆԿՆԴՐՈՒՄ

Հայ կոմպոզիտորը կարողացել է շոտլանդական ժողովրդական երաժշտության ոգով այնպիսի երգ ստեղծել, որ հոգեհարազատ լինի բոլոր ազգերին:

ԻՄ ՍԻՐՏԸ ԼԵՌՆԵՐՈՒՄ Է

Երաժշտ.՝ Առնո Բաբաջանյանի

1. *Արտահայտի՛ր քո կարծիքը: Քեզ հուզե՞ց երաժշտությունը, կարոտի զգացումը նկատեցի՞ր երաժշտության մեջ:*

ՍՏԵՂԾՈՒՄ

1. *Դասընկերներով դիտե՛ք մի հատված «Իմ սիրտը լեռներում է» թատերախաղից, ապա նույնը երաժշտության ուղեկցությամբ բեմականացրե՛ք դասարանում:*

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Ի՞նչ արվեստ է թատրոնը:*
2. *Հայաստանում գործող ի՞նչ թատրոններ գիտես:*
3. *Ի՞նչ դեր ունի երաժշտությունը թատրոնում:*
4. *Ո՞վ է Լերմոնտովի «Դիմակահանդես» դրամայի երաժշտության հեղինակը:*
5. *Ո՞վ է գրել Վիլյամ Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է» պիեսի ներկայացման երաժշտությունը:*
6. *Թատերական ի՞նչ ներկայացումներ ես դիտել:*

ԷՋՐՈՒՅԹ

Սցենարի հեղինակ
Ռեժիսոր
Օպերատոր
Բալետմայստեր
Դերասան
Համր կինո

Կինոն 20–րդ դարի նվաճումներից մեկն է:

Կինոն հունարեն ***կինեմա*** բառից է, որը նշանակում է «շարժում»: Այն «շարժվող նկարների» տեսալսողական արվեստ է, ստեղծվել է XIX դարի վերջում:

Սկզբում կինոն եղել է «համր»՝ առանց ձայնի: Էկրանի վրա երևացել են միայն շարժվող պատկերներ, իսկ 1920–ականներից կինոն դարձել է հնչյունային:

Կինոն ընդգրկում է արվեստի մեծ ընտանիքի անդամներին՝ գրականություն, երաժշտություն, պարարվեստ, կերպարվեստ և թատրոն, ինչպես նաև ժամանակակից գիտատեխնիկական շատ ձեռքբերումներ:

Երաժշտությունը միշտ եղել է կինոյի անբաժան մասը: Դեռ համր կինոյի ժամանակներում շարժվող պատկերներն ուղեկցվել են երաժշտությամբ. կինոսրահում ցուցադրմանը զուգահեռ նվագել են երաժիշտները:

Հայաստանում առաջին համր կինոնկարը ստեղծվել է 1925 թ–ին: Դա Ալեքսանդր Շիրվանզադեի «Նամուս» վեպի հիման վրա նկարահանված համանուն կինոնկարն է:

Երաժշտությունը հուզական երանգ է հաղորդում կատարվող իրադարձություններին, արտահայտում է կերպարների հոգեվիճակն ու ապրումները:

Կինոնկարի ստեղծմանը մասնակցում են սցենարի (տեքստի) հեղինակը, ռեժիսորը, օպերատորը, կոմպոզիտորը, նկարիչը, բալետմայստերը, դերասանները և այլք:

Հայկական առաջին հնչյունային կինոնկարը «Պեպո»-ն է, որը նկարահանվել է 1935 թ-ին Գաբրիել Սունդուկյանի համանուն կատակերգության հիման վրա:

ԿԱՏԱՐՈՒՄ

ՊԵՊՈՅԻ ԵՐԳԸ

Երաժշտ.՝ Արամ Խաչատրյանի

ՊԵՊՈՅԻ ԵՐԳԸ

Խոսք՝ Ե. Չարենցի
Երաժշտ.՝ Ա. Խաչատրյանի



Դամբը ձեռիս ջուրն եմ մտնում,
Ձեռս, ոտս թաց է լինում,
Հալալ արյուն-քրտինք թափիմ, *2 անգամ*
Քիրս ու դեդիս լաց ին լինում:

Դամբը ձեռիս աշխատում եմ,
Հալալ աշխատանքս իմ ուտում,
Վա՛յ էն մարդին, ով աշխարհքում *2 անգամ*
Խալխի դատած հացն է ուտում:

Հալալ մարդու սիրտն է ուրախ,
Ճակատը միշտ թաց է ըլլում,
Վա՛յ էն մարդին, վուր համ գջլում, *2 անգամ*
Համ էլ անկուշտ լաց է ըլլում:

Դեդի — մայր
Խալխ — ժողովուրդ
Գջլել — խլել

1. *Դասընկերներով դիտե՛ք «Պեպո» կինոնկարը և պատմե՛ք ձեր տպավորությունները ֆիլմի ու երաժշտության մասին:*

ՊԵՊՈՅԻ ԵՐԳԸ



Ունկնդրեք ***պադեսպան***, ***պոլկա*** և ***վալս*** պարերը «Պեպո» կինոնկարից, ապա՝ «Զանգեզուրի» քայլերգը «Զանգեզուր» կինոնկարից:

ԻՍԿ ԴՈՒ ԳԻՏԵ՞Ս

«Պեպո» ֆիլմում արտացոլված են թիֆլիսաբնակ հայերի բարքերն ու կենցաղը, սակայն հիմնական սյուժեն չքավոր ձկնորս Պեպոյի և նրա ընտանիքի ու ընկերների՝ զրկանքներով լի կյանքի մասին է:

Կոմպոզիտորը կինոնկարի համար կարողացել է ստեղծել երաժշտություն, որն արտացոլում է ժամանակի իրական պատկերը, հայերի կենցաղը, մարդկանց փոխհարաբերությունները: Աղքատ մարդկանց բնութագրելու համար Ա. Խաչատրյանը դիմել է ժողովրդական երգերին ու պարերին ժողովրդական նվագարանների՝ շվիի, դուդուկի, սազի, թառի, քամանչայի, դհոլի կատարմամբ: Իսկ գոռոզ, իբր եվրոպական կենսաձևին հետևող, անազնիվ ճանապարհով հարստացած Զիմզիմովին և նրա նման մարդկանց բնութագրելիս կոմպոզիտորն օգտագործել է եվրոպական պարային ձևերը՝ վալս, պադեսպան, պոլկա, որոնք կինոնկարում ծաղրական երանգ են ստացել:

Կոմպոզիտոր Ա. Սաթյանը նույնպես երաժշտություն է գրել կինոնկարների համար: Նրա կինոերգերը այսօր էլ շատ սիրելի են: Դրանցից են «Մարտիկի երգը», «Արարատյան դաշտի երգը», «Խաղողաքաղը», «Ես իմ անուշ Հայաստանի»–ն:

«Նվագախմբի տղաները» հանրահայտ կինոնկարի երաժշտության հեղինակը հայ կոմպոզիտոր Գևորգ Արմենյանն է: Ռեժիսորներն են Հենրիկ Մալյանը և Հենրիկ Մարգարյանը: Այս կինոնկարում հիմնական հերոսները զինվորական նվագախմբի երաժիշտներն են: Նվագախմբի ամենակրտսեր անդամը՝ «գնդի որդի» Ճուտոն, հորինում է մի մեղեդի և սկսում է սուլել: Նվագախմբի տղաներին դուր է գալիս Ճուտոյի մեղեդին: Այն զարգանալով և մշակվելով վերջում դառնում է հանդիսավոր, հաղթական, գեղեցիկ քայլերգ:

Այս կինոնկարի երաժշտությունը շատ սիրված է, իսկ քայլերգն այսօր էլ հնչում է տարբեր հանդիսությունների ժամանակ:

Լուսանկարներ «Նվագախմբի տղաները» կինոյից

ՈՒՆԿՆԴՐՈՒՄ

ՔԱՅԼԵՐԳ

Հատված «Նվագախմբի տղաները» կինոնկարի երաժշտությունից
Երաշտ.՝ Գևորգ Արմենյանի

ՍՏԵՂԾՈՒՄ

1. *Դասընկերներով «Հզոր բանակ» երգը կատարե՛ք երկ-ձայն: Արտահայտե՛ք երգի տրամադրությունը:*

ՀԶՈՐ ԲԱՆԱԿ

Երաժշտ.՝ Աշոտ Սաթյանի

ՀԶՈՐ ԲԱՆԱԿ

Խոսք՝ Հ. Շիրազի

Երաժշտ.՝ Աշոտ Սաթյանի

Հայաստանի սարերի պես
Թիկունք ունես, հզո՛ր բանակ,
Ոչ մի ոսոխ չի հաղթի քեզ,
Մեր հաղթական հզո՛ր բանակ:

Դու՝ մեր փրկիչ, մեր ապավեն,
Խավարի դեմ վառ արեգակ,
Չար թշնամիք որքան դավեն,
Դու՝ անխորտակ, հզո՛ր բանակ:

Նորից պիտի քո զրահով
Ծաղկի երկրի հողն ապահով
Հավերժական արևի տակ,
Անմա՛ր կրակ, հզո՛ր բանակ:

Դու՝ մեր փրկիչ....



ՀԶՈՐ ԲԱՆԱԿ

Քայլերգային

Հա-յաս-պա-նի սա-ռե-ռի պես Թի-կունք
ու-նես, հը-զո՛ր բա-նակ, Ոչ մի
ո-սոխ չի հաղ-թի քեզ, Մեր հաղ-
թա-կան հը-զո՛ր բա-նակ: Դու՝ մեր
փոքր-կիչ, մեր ա-պա-վեն, Խա-վա-
ռի դեմ վառ ա-ռե-զակ, Չար թշ-
նա-միք ոչ-քան դա-վեն, Դու՝ ան-
խոր-տակ, հը-զո՛ր բա-նակ:

ՍՏԵՂԾՈՒՄ

1. *Դասընկերներով դիտե՛ք «Նվագախմբի տղաներ» ֆիլմից մեկ հատված և փորձե՛ք բեմականացնել:*

Լուսանկար «Պեպո» կինոյից

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Արվեստի ինչպիսի՞ տեսակ է կինոն: Պատմե՛ք կինոյի մասին:*
2. *Ի՞նչ դեր է կատարում երաժշտությունը կինոյում:*
3. *Կոմպոզիտոր Աշոտ Սաթյանի ո՞ր երգերը գիտես:*
4. *Ո՞վ է «Նվագախմբի տղաները» կինոնկարի երաժշտության հեղինակը:*
5. *Ո՞վ է «Պեպոյի երգ»–ի խոսքերի հեղինակը:*
6. *Ի՞նչ երգեր գիտես կինոնկարներից: Երգի՛ր:*
7. *Հայկական ո՞ր կինոնկարն ես ամենաշատը սիրում: Ինչո՞ւ:*

Ճիշտ այնպես, ինչպես թատրոնում և կինոյում, երաժշտությունը մեծ դեր ունի նաև հեռուստատեսային և ռադիո հաղորդումներում, գովազդում, համացանցով տարածվող տեսահոլովակներում: Առանց երաժշտության այդ ամենը կարող է անհետաքրքիր և ձանձրալի թվալ: Հոլովակներում, հաղորդումներում կամ գովազդում երաժշտության օգտագործումը կոչվում է ***երաժշտական ձևավորում***:

Երաժշտական ձևավորումը շատ կարևոր է: Երաժշտությունը կարող է օգտագործվել որպես հաճելի ֆոն, տրամադրություն ստեղծել: Լավ ընտրված երաժշտությունը հետաքրքրություն է առաջացնում, և հակառակը՝ երբ երաժշտությունը վատ է ընտրված կամ անհամապատասխան է, այն կարող է վանող և տհաճ լինել: Վերջապես, գովազդի մասնագետներին հայտնի է մի գաղտնիք՝ գովազդի երաժշտությունը պետք է մնա մարդկանց հիշողության մեջ և գովազդվող ապրանքի կամ ծառայության նկատմամբ ավելի մեծ պահանջարկ ապահովի:

Հաղորդումներում կամ գովազդում կարող է հնչել անցյալում գրված երաժշտությունը, բայց ավելի հաճախ դրա համար հատուկ երաժշտություն է ստեղծվում: Դա արվում է այն պատճառով, որ ոչ բոլոր երաժիշտներն են համաձայն, որ նրանց աշխատանքն այս նպատակով օգտագործվի: Ստեղծագործությունը հեղինակի սեփականությունն է, իսկ դրա կատարումը՝ նաև կատարողներինը. դա կոչվում է ***հեղինակային իրավունք***: Հեղինակային իրավունքը մեր երկրում պաշտպանվում է օրենքով: Այդ առումով ևս երաժշտական ձևավորումը պատասխանատու գործ է, և որևէ

երաժշտություն օգտագործելուց առաջ միշտ պետք է ստանալ դրա հեղինակի և կատարողների թույլատվությունը: Բացառությունը աշակերտական կամ ուսանողական նախագծերն են. ուսման նպատակով կատարված աշխատանքների վրա հեղինակային իրավունքը չի տարածվում:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Ի՞նչ է երաժշտական ձևավորումը, ո՞րտեղ է այն օգտագործվում:*
2. *Ի՞նչ դեր ունի երաժշտությունը հեռուստահաղորդումներում, տեսահոլովակներում, գովազդում:*
3. *Ի՞նչ է հեղինակային իրավունքը:*
4. *Հիշո՞ւմ ես որևէ հեռուստահաղորդման կամ գովազդի երաժշտություն:*
5. *Ամբողջ դասարանով հիշե՛ք տարբեր հաղորդումներում կամ գովազդներում օգտագործված երաժշտություն: Ուսուցչի օգնությամբ պարզե՛ք, թե ովքեր են այդ երաժշտության հեղինակները:*
6. *Հեռուստատեսային եթերը Հայաստանում ամեն օր սկսվում և ավարտվում է մեր երկրի ազգային օրհներգով: Գիտե՞ս, թե ովքեր են մեր օրհներգի բառերի և երաժշտության հեղինակները: Կարո՞ղ ես երգել այն: Եթե քո դասարանցիներից որևէ մեկը չի կարող դա անել, ուսուցչի օգնությամբ սովորեցրո՛ւ նրան:*

Հաղորդումների և գովազդի ձևավորման մեջ օգտագործվող երաժշտությունը պետք է համապատասխանի դրա բովանդակությանը: Օրինակ՝ դժվար կլիներ պատկերացնել մանկական հեռուստահաղորդում, որի ձևավորման մեջ օգտագործված լիներ ծանրահունչ սիմֆոնիկ երաժշտություն: Այստեղ ավելի կսազեր որևէ

մանկական երգ կամ գունեղ գործիքավորմամբ հասարակ մի մեղեդի:

Եվ հակառակը, օրինակ՝ լուրերի թողարկման ձևավորման երաժշտությունը պետք է լինի նշանակալից և լուրջ և սևեռուն. չէ՞ որ լուրերը կարող են տարբեր լինել, և այստեղ երաժշտության նպատակը ոչ թե զվարթ տրամադրություն ստեղծելն է, այլ ուշադրություն գրավելը:

Բարեբախտաբար, երաժշտության շատ տեսակներ կան, ուստի ամեն տեսակի տրամադրության համար կարելի է գտնել համապատասխան երաժշտություն:

Գովազդի համար գրված երաժշտությունն ունի ևս մի առանձնահատկություն: Այն պետք է հիշվող լինի և հնարավորինս հասարակ: Եղե՞լ է այդպես, որ որևէ երգ այնքան մնա հիշողությանդ մեջ, որ ամբողջ օրը մտովի երգես այն: Հենց սա է գովազդի համար երաժշտություն ստեղծողների նպատակը. ամեն անգամ հիշելով այդ երաժշտությունը՝ մենք նաև ակամա հիշում ենք դրա միջոցով գովազդվող ապրանքների մասին:

Այդ նպատակով գովազդը հաճախ ավարտվում է երգային կարճ հատվածով, որը պարունակում է գովազդվող ապրանքանիշի անունը: Այս փոքրիկ երգային հատվածները անգլերեն կոչվում են «ջինգլ»–ներ, իսկ հայերեն դրանք կարելի է «գովազդային խաղիկ»–ներ անվանել:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Ինչպիսի՞ն պետք է լինի երաժշտական ձևավորման մեջ օգտագործվող երաժշտությունը:*

2. *Ո՞րն է գովազդի համար ստեղծվող երաժշտության առանձնահատկությունը: Ի՞նչ է «գովազդային խաղիկը»:*

3. *Ի՞նչ գովազդային խաղիկներ գիտես: Փորձի՛ր երգել դրանք:*

4. *Պատկերացրո՛ւ, որ քեզ է վստահված գովազդի երաժշտական ձևավորումը: Ունես հինգ ապրանքատեսակ կամ ծառայություն, որի համար ընտրվել է հինգ երաժշտական հատված: Համապատասխանեցրո՛ւ երաժշտությունը գովազդին և բացատրի՛ր քո ընտրությունը: Ընտրությունը կատարելուց հետո իմացի՛ր, թե ինչ երաժշտություն է սա, և ովքեր են այս հատվածների հեղինակները:*

5. *Ունե՞ս քո սիրելի ապրանքանիշը: Դրա համար փորձի՛ր ստեղծել գովազդային խաղիկ: Այդ նպատակով սկզբից հորինի՛ր երկտող կամ քառատող, որտեղ հիշատակվում է ապրանքանիշի անունը, ապա ստեղծի՛ր կարճ մեղեդի հորինածդ տեքստը երգելու համար:*

Դասական ոճի հագուստ և պարագաներ

Արագընթաց մեքենաների վաճառքի սրահ

Ծաղկի խանութ

Սպորտային միջոցառում

Ճանապարհորդություն դեպի Հեռավոր Արևելք

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՑԱՆՑՈՒՄ

Երաժշտությունը լայնորեն ներկայացված է նաև համացանցում: Երաժշտության համար կան հատուկ կայքեր և ինտերնետային հարթակներ, որտեղ մարդիկ կարող են կիսվել երաժշտությամբ, լսել կամ մեկնաբանել այն: Հատկապես հայտնի է Յություբ (YouTube) հարթակը, որը, սակայն, միայն երաժշտության համար չէ նախատեսված, այլ նաև տարբեր տեսահոլովակների: Յություբը անվճար հարթակ է, որից ամեն ոք կարող է օգտվել:

Գոյություն ունեն նաև միայն երաժշտության համար նախատեսված կայքեր և հարթակներ: Դրանցից են, օրինակ, Սփոթիֆայ (Spotify), Էփլ Մյուզիք (Apple Music), Սաունդքլաուդ (SoundCloud) կայքերը: Այստեղ երաժշտությունը տեղադրված է առանց տեսահոլովակների՝ պարզապես լսելու համար: Այս հարթակները տարածում են երաժշտությունը, անհայտ արվեստագետներին օգնում են հայտնի դառնալու: Դրանց մի մասը վճարովի է. չէ՞ որ երաժշտություն ստեղծելն ու ձայնագրելը մեծ աշխատանք է, ուստի ամեն անգամ, երբ ինչ–որ մեկը վճարում է երաժշտություն լսելու համար, երաժիշտները ստանում են այդ գումարի մի մասը և կարող են նոր ստեղծագործություններ գրել և ձայնագրել:

Համացանցում տեղադրված երգերի և հոլովակների մի մասը նախատեսված է միայն մեծերի համար, սակայն երաժշտությունը հիմնականում բոլորը կարող են լսել և վայելել: Կան, սակայն, որոշ կարևոր պայմաններ: Համացանցում այսօր կարելի է գտնել ամեն ինչ՝ ամենաորակյալ ձայնագրություններից մինչև ցածրարժեք, վատ ճաշակ ձևավորող երգեր և երաժշտութ-

յուն: Ուստի պետք է հատուկ ուշադրություն դարձնել այն բանի վրա, թե ինչ երաժշտություն եք լսում, քննարկել երաժշտությունը, կիսվել ձեր նախասիրություններով մեծերի՝ ծնողների կամ ուսուցչի հետ:

Մեկ այլ կարևոր պայման է համացանցից օգտվողների լավ վարքագիծը: Որոշ կայքեր թույլ են տալիս, որ մարդիկ մեկնաբանություններ գրեն երաժշտության կամ այլ հոլովակների մասին: Դա երաժշտության մասին կարծիք արտահայտելու, այլ մարդկանց հետ հաղորդակցվելու լավ միջոց է: Կարևոր է, սակայն, որ մեկնաբանությունները լինեն գրագետ և ոչ մի դեպքում չլինեն վիրավորական՝ անկախ այն բանից, դրական է մեկնաբանողի կարծիքը, թե բացասական:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. *Երաժշտական ի՞նչ կայքեր և համացանցային հարթակներ գիտես: Ի՞նչ գիտես նրանց մասին:*

2. *Համացանցի միջոցով երբևէ երաժշտություն լսե՞լ ես: Ո՞ր կայքերից ես օգտվել:*

3. *Ի՞նչ է կարևոր իմանալ համացանցով երաժշտություն լսելու պայմանների մասին:*

4. *Քո սիրելի երգերն ու երաժշտությունը գտի՛ր համացանցում: Պատմի՛ր դրանց մասին դասարանում:*

5. *Ունե՞ս սիրելի կոմպոզիտոր կամ երաժիշտ: Համացանցով գտի՛ր նրա որևէ ստեղծագործություն կամ կատարում, որը դեռ չէիր լսել: Դասարանում պատմի՛ր գտածդ երաժշտության մասին, կիսվի՛ր քո կարծիքով և տպավորություններով:*

ԲԱՌԱՐԱՆ

ալտ — կանացի, ամենացածր թավ ձայն
արիա — օպերայում գործող անձի երաժշտական մենախոսություն
արիետա, արիոզո — արիայի փոքրածավալ և պարզ կառուցվածք ունեցող տեսակներ
բալետ — թատերապար, երաժշտական ներկայացում, երաժշտությունն ու թատրոնը միավորող բեմական արվեստի տեսակ
բալետմայստեր — բալետի պարերի բեմադրիչ
դիրիժոր (նվագավար) — երաժշտական խմբի ղեկավար
ժողովրդական պար — ժողովրդի կողմից ստեղծված պար, որն ունի իրեն բնորոշ պարային շարժումները
լարային քառյակ — լարային չորս նվագարաններից բաղկացած երաժշախումբ, անսամբլ
լիբրետտո — մեծածավալ երաժշտական ստեղծագործությունների գրական տեքստ
խմբերգ — երգչախմբի համար գրված երգաժշտական ստեղծագործություն
ծրագրային երաժշտություն — գրական տեքստի հիման վրա գրված երաժշտական ստեղծագործություն
կանտատ — բազմամաս երգչային, բազմաձայն ստեղծագործություն
կորդեբալետ — խմբապար բալետում
կոնցերտ — առանձին նվագարանների համար ստեղծված մեծածավալ ստեղծագործություն
համր կինո — կինո, որը ցուցադրվել է առանց համահունչ ձայնի:

մեներ գ — մեկ երգչի համար գրված երաժշտական ստեղծագործություն
մեցցո սոպրանո — կանացի թավ ձայն
նախերգանք — մեծ կտավի երաժշտական ստեղծագործությունների սկիզբ, բացում
պա–դե–դե — զուգապար բալետում
պաննո — բազմամաս սիմֆոնիկ ստեղծագործություն
պոլկա — չեխական ժողովրդական հանդիսավոր պար
ռեժիսոր — թատրոնում և կինոյում ներկայացումների գեղարվեստական ղեկավար, դերուսույց
ռեքվիեմ — սգո մեծածավալ երաժշտական ստեղծագործություն
ռիթմ — հնչյունների տևողության հաջորդական կատարում
ռոմանս — երգի տեսակ, որը ծագել է Իսպանիայում:
սիմֆոնիա — երաժշտական ծավալուն, բարդ ստեղծագործություն
սինկոպա — երաժշտության շեշտի տեղափոխումը ուժեղ մասից թույլ մաս
սյուիտ — բազմամաս երաժշտական ստեղծագործություն
սոնատ — բազմամաս երաժշտական ստեղծագործություն: Հիմնականում գրվում է նվագարանների համար:
տանգո — իսպանական հնագույն ժողովրդական պար. պարում են զույգով:
օպերա — երաժշտական–թատերական մեծածավալ ստեղծագործություն
օպերատոր — կինո նկարահանող մասնագետ–նկարիչ
օպերետ — երաժշտական կատակերգություն

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Արմենյան Գևորգ.....89, 90
Բաբաջանյան Առնո.....84, 85
Գրիգ Էդվարդ.....43, 77, 78, 79,
Թումանյան Հովհաննես..... 8, 9, 10, 13, 28, 29, 68
Խաչատրյան Արամ 53, 74, 78, 87, 89
Կոմիտաս 9, 10, 11, 12, 20, 21, 40, 43, 47
Հարությունյան Արտաշես 21, 22
Մելիքյան Ռոմանոս 16, 17, 19, 20, 21, 23, 41
Մենդելսոն Ֆրեդերիկ.....9
Մոցարտ Ամադեուս Վոլֆգանգ 33, 34, 35, 37
Չայկովսկի Պյոտր Իլյիչ 57
Չուխաջյան Տիգրան.....25, 26, 38, 39
Պետրոսյան Ռոբերտ.....61, 62, 64
Տիգրանյան Արմեն.....28, 29, 32
Սաթյան Աշոտ.....89
Սարյան Ղազարոս..... 66, 67, 73
Սվիրիդով Գեորգի 21

ԱՌԱՐԿԱՅԱՑԱՆԿ

«Ազատություն»..... 26, 27,
«Ա՜խ, ինչ լավ են».....13
«Աղջիկների պարը».....53
«Աղջիկների պարերգը» 53, 54
«Ամպի տակից».....29, 30, 32
«Անագե զինվորիների քայլերգը», «Մաշայի և Շչելկունչիկի
պա–դե–դեն» 56, 57
«Անիտրայի պարը».....43
«Առուն և աղբյուրը» 19, 20
«Գարնան կարոտ»..... 35, 36, 37

«Երանգի» 43
«Թող լարեն ջութակները» 48, 49, 50
«Իմ սիրտը լեռներում է» 84, 85
«Լեռնային արքայի քարանձավում», «Օզեի մահը» 78
«Խոսք իմ որդուն» 61, 62, 63, 64, 65
«Կաքավի երգը» 10, 11, 12
«Կռունկ Հայաստանի» 69, 70
«Համբարձում յայլա» 29, 31, 32
«Հայաստան» սիմֆոնիկ պաննո 67, 73
«Հզոր բանակ» 90, 91, 92
«Հովվի կանչ» 14
«Մարտիկի երգը» 74, 75, 76
«Մենք քաջ տոհմի զավակներն ենք» 39
«Նազ պար» 48
«Նախերգանք» 28
«Նարոյ» 44, 45
«Նինայի ռոմանսը» 83
«Շուշիկի» 43
«Պապագենոյի երգը» 34
«Պսակ–պսակ» 41, 42
«Պեպոյի երգը» 87, 88
«Ջութակի կոնցերտ» 78, 79
«Ռոմանս» 21
«Սալտարելո» 80
«Սարեն կուգան» 47, 48, 50
«Սպարտակի հաղթանակը», «Ստրուկների ապստամբությունը» 55, 56
«Վարդը» 17, 18
«Վալսը» 83
«Վենետիկի գոնդոլավարը» 9
«Քայլերգ» 56, 90
«Քոչարի» 48
«Օրորոցային» 21, 22

ՅՈՒՐԻ ՅՈՒՋԲԱՇՅԱՆ, ԱԼԻՆԱ ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ
ՎԵՐԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ, ԱՐԹՈՒՐ ԱՎԱՆԵՍՈՎ

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

5

Դասագիրք հանրակրթական հիմնական դպրոցի
5–րդ դասարանի համար

Հրատարակչության տնօրեն՝ Էմին Մկրտչյան
Տեխնիկական խմբագիր՝ Նվարդ Փարսադանյան
Խմբագիր և սրբագրիչ՝ Նունիկ Ավետիսյան
Համակարգչային ձևավորումը
և նկարազարդումը՝ Անահիտ Պետրոսյանի
Կազմի ձևավորումը՝ Մարիամ Կանայանի
Նոտագրող՝ Հասմիկ Ղուկասյան
Շարվածքը՝ Սուսաննա Ավետիսյանի

Օգտագործված նկարները՝ համացանցային ազատ
օգտագործման կայքերից

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 70x100 1/16
Թուղթը՝ օֆսեթ: Ծավալը՝ 6,5 տպ. մամուլ

«Զանգակ» հրատարակչություն
ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2
Հեռ.՝ (+37410) 23 25 28, էլ. փոստ՝ info@zangak.am
Էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am
Ֆեյսբուքյան կայքէջ՝ www.facebook.com/zangak